

ՀՅՈՉԻԿ

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇԱՎՑՈՒԹԵԱԸ” ՕՐԳԱՆ

1895-1896

1895 Թւականը հայ ժողովրդի կեանքի ամենատիտուր թւականներից է. նա շագախւած է արիննով ու կրակով. 1895 թւականը հայ ժողովրդի համար սգոյ թւական էր:

Հայ ժողովուրդը Սասունի ջարդը կրելուց յետոյ մեծ յոյսերով ուսք դրեց այդ թւականը. թմրած, թուլցած ու վհատած ժողովուրդը ոսքի էր կանգնում, յեղափոխան ուժեղ, խոր գիտակցութեամբ սկսում էր զգալ ու ապրել, սկսում էր կեանք ունենալ Ամեն տեղ տիրում էր ոգեսրութիւն, սառած սրտերը ետ էին գալիս, թմրած ուղեղները բորբոքւում—ամեն. քը գարուն էին երգում...

Եւ այս ընդհանուր խնդութիւնը քանի գնում՝ զարգանում, աճում էր շնորհիւ տէրորիստական ու հայդուկային յաջող գործողութիւնների: Հմտութեամբ մը զած կոիւը սարսափեցրել էր թշնամուն, իսկ գիպօմատիային նեղն էր լծել... Յաղթութիւնը ակնյայտնի էր, մի քայլ առաջ պիտի անցնէինք, երբ առաջ եկաւ մի գործ, որ բոպէի պահանջը չէր և իրերի դրութիւնը ծանրացրեց՝ առիթ տալով թշնամուն օգտւել հանդամանքից և իւր չարանենդ ծրագիրը, ընդհանուր կոտորածը իրագործել:

1895 թ. այնքան դաւն, այնքան կսկծեցուցիչ է, որ մեզ թշլ չէ տալիս մի հայեացք ձգել մի շարք նշանաւոր գործերի վրայ, որոնք պարբերաբար տեղի ունեցան առաջին կիսամեակում և շարունակում են. խոստովանում ենք, տեղի ունեցած ու ունեցող գործերը թշնամու կոտորածի առջև չնչին են.

Թշնամին կոտորեց և ամենասանինայ, սարսափելի կերպով. մի քանի շաբաթւայ մէջ տաճկահայ ժողովուրդը տւաւ 80-100 հազար զոհ: Թշնամին չբաւականանալով կոտորել հրդեհեց, աւերեց, թալանեց ժողովրդի ունեցած-շունեցածը ու կենդանի մնացած մասը հատնեց սովի, որ սա շարունակէ իւր սկսածը, և այ-


սօր աւերակների մէջ մերկ ու սոված թափառում են տասնեակ հազարաւոր մարդկային էակներ, փոքր ու մեծ, կին ու տղամարդ. իսկ քանի մնանում, այդ միայն գիտէ այն հողը, որ իւր գիրկն է առնում այդ թշւառ ու տանջւած գիրկները:

Այս սարսափելի տեսարանի առջև մենք չենք ընկճուում, չենք յուսահատուում—այդ յեղափոխականի գործ չէ, այդ վատութիւն ու դաւաճանութիւն է: Խոստովանել ձմարտութիւնը չխաբել ոչ ժողովրդին և ոչ էլ իրեն, այդ չէ նշանակում թուլանալ, ընկնել. ոչ այդ մեր բաժինը չէ: Հենց անցեալ տարի՝ այս ժամանակ, երբ մենք մի հայեացք էինք ձգում՝ անցեալի վրայ, ասել ենք—”Կոտորել՝ չէ նշանակում յաղթել”, և մենք այսօր դարձեալ կը կրինենք նոյնը: Թշնամին կոտորել է, հայ ժողովուրդն էլ իւր կողմից է նրան հարւածներ տւել. բայց թշնամունը ուժեղ է. նա կոտորել է: Կոտորել է, բայց չէ յաղթել հայ ժողովրդի ձեռքից չէ խլել ապստամբական անարատ գրօշակը. նա բարձր ու ուժեղ է բռնած, նա կընկնի պատառ-պատառ եղած, կոփկրտած պիոն թշնամու ուտերի տակ միմիայն վերջին հայի վերջին շնչի հետ:

Բայց ոչ, երբէք թշնամուն այդ չի յաջողեիլ, հաժողովուրդը անլինկճելի է, նրա մէջ այնքան բարոյական ու կենսական ոյժ կայ: Ազատութեան դրօշակը միշտ ծածանելու է Սասունի ու Սեպուհ լեռների գագաթին, ապստամբ Զէյթունի կրծքին—ապագան նրանն է, և մենք հրաւիրում ենք սգաւոր հայ ժողովրդին հաւատ ունենալ ու աւելի ամուր սեղմել, ոյժ տալ նըրան:

Այսպիսի մի ծանր բոպէում, երբ հայ ժողովուրդը մատնած է ծայրայեղ թշւառութեան, երբ նա մենակ է մնացել ուժեղ թշնամու դիմաց, այսպիսի մի ծանր բոպէում դարձեալ յեղափոխական կոիւը առաջ է մըղուում. ժողովրդի յեղափոխական զաւակները հաւատարիմ են մնում իրենց կոչմանը, հաւատարիմ են մընում ապստամբական դրօշակին ու թշնամու հարւածների դիմաց կուրծք են բռնուում:

Եւ ողբան էլ 1895 թ. սգի ու ողբի թւական լինի, որքան էլ նրա յիշատակը դաւնութեամբ ու անէնքով լիքը լինի, մենք մտնում ենք 96-ը յուսով ու հաւատով. ներկայ կոիւը դուցէ երկար կը տեսի, թշնամին ներ-



կայ պայմաններում կարող է մեզ մի քանի հարւածներ ևս հասցնել, բայց նա յաղթող հանդիսանալ երբէք չէ կարող. նա կենսականութիւն չունի, նա իւր գոյութիւը պարտական է ճակատագրին:

Մենք շատ լաւ ենք ճանաչում թշնամուն, գիտենք նրա ոյժը, գիտենք նրա առաւելութիւնն ու պակասութիւնները և որովհետև մենք նրան գիտենք, ճանաչում ենք, մեր կոփել կը լինի ոչ թէ անիմաստ, մշուշի մէջ, այլ չափած, կշռած, ինչպէս միշտ:

Եւ առաջ տանելով այդ կոփել, մենք յոյս ունինք յաղթող հանդիսանալ, մենք յոյս ունինք, որ թշնամուն կատիպենք զիջանել ու տեղի տալ, մենք կատիպենք թողնել կառավարութեան ղեկը ժողովուրդներին, որոնց են պատկանում իրաւունքը, դատը, խօսքը և հողը:

Հայ ժողովուրդ, այսպիսի յոյսերով փակենք դառն թւականը, այսպիսի յոյսերով մտնենք 96 թւականը. ձեռք ու թիկունք տանք և ճակատագրով ապրող թըշնամուն դէմ կուելով՝ վրէժինդիր լինենք հազարաւոր նահատակների, աւերակ դարձած երկրի համար:

Զողբանք, որ այսօր կան երկիրներ, ուր խնդում, ուրախանում են.. չվհատւինք, որ մենք մտնում ենք 96 թւականը կրած ամենասարսափելի վերք՝ սգաւոր ու տիսուր, հազարաւոր վիրաւորեալների, քաղցածների և մերկերի հետ, չվհատւինք, այդ թուլութեան նշան է, դա յուսահատութիւն է. իսկ յուսահատուել, կը նշանակէ ինքնասպանութիւն գործել, կը նշանակէ թշնամու ստերի տակ դնել իւր պատիւր, իւր ապագան. ոչ, երբէք: Մահ կամ ազատութիւն, ահա պակ ելքը. մենք չենք ստորանալ մենք չենք թոյլ տալ, որ մեզ վրայ նայեն զզւանքով ու արհամարանքով. մենք մեր հերոսական ընդիմագրութեամբ, անհաւասար կուի մէջ քաջութեամբ մարտնչելով կամ ազատութիւն ձեռք կը բերենք, կամ քաջութեամբ կընկնենք պատերազմի դաշտում՝ բիծ թողնելով մարդկութեան ճակատին... որ նրա դատապարտութեան նշանը կը լինի:

Մանենք 1896 թւականը՝ վիրաւորւած ու սրտի կըսկիծով, բայց լի վրէժինդրական ոգով ու արիութեամբ աւելի ոյժ տալու ստորաքարոշ, գարշելի թշնամու դէմ մդւած կուին: Սուլթանի կառավարութեան ու մեր ճակատագրու որոշողը կոփւն է, կուենք ամենալարւած ուժերով, ամեն տեսակ միջոցներով. չպէտք է ոչինչ ինայել, պէտք է գործ դնենք, ինչ որ կայ մեր տրամադրութեան տակ—լինի ուումբ, լինի ատրճանակ թէ հրացան, լինի սուր թէ բահ. այս է պահանջում մեղնից ոքաղաքակրթւածն ու մարդկանկա՞ աշխարհը... այս են պահանջում մեր ներկան ու ապագան:

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ԵԽՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԾՐԻՑ

(ՃԵՌԱԳԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ)

22-ին Դեկ. Գերմանական դեսպանը Զէյթունի ապամբներին կամ բնակիչներին ընդհանուր կոտորածի վերաբերմամբ՝ Դրանը նոր գիմումներ արաւ: Անգլիական դեսպանը ցոժ տւաւ առաջնի ծանուցագրին: Բայց և այսպէս վախենում են, թէ Զէյթունի դաւառը արդէն աւերած լինին և հայերը կոտորած:

* *

24-ին Դեկ. Զէյթունի հայերը յարձակում գործեցին Հիհիլ թուրք գիւղին վրայ, թալանեցին, յետոյ այրեցին և 10 մարդ էլ սպանեցին:

—Ստէֆանի գործակալութեան Պոլսից քաշած մի հեռագիր հաղորդում է, որ վեց մեծ պետութիւնների դեսպանները առաջարկեցին Դրան իրենց աջակցութիւնը Զէյթունի ապստամբների հետ բանակցութեան մտնելու համար: Հալէպի Եւրոպական հիւպատոսները ապստամբավայրը պիտի ուղարկւին իրուկ պատիրակ:

* *

25-ին Դեկ. Հալէպից ստացած տեղեկութիւնների համաձայն, կայսերական բանակները տիրել են Զէյթունին. ապստամբները փախել են լեռները:

* *

26-ին Դեկ. Աւստրիայի դեսպան պ. Քալիչէ յոյս յայտնեց սուլթանին՝ թէ նա ամենախիստ միջոցներ ձեռք չի առնիլ զէյթունցիների գէմ:

27-ին Դեկ. Պաշտօնական տեղեկութիւնների համատ, Զէյթունը գրաւելու ժամանակ՝ կուռմ ընկել են 2500 հայ և 250 թուրք:

* *

28-ին Դեկ. Զէյթունի մասին հակասական լուրեր են պտտում. ոմանք ասում են՝ թէ մեծ կոփւ է տեղի ունեցել և 2500 հոգի մեռել են, իսկ միւսներն էլ թէ միայն ամրոցն է առնւել: Սակայն վերջին լուրերին նայելով՝ հաւանական է երկում, թէ թուրքերը գրաւել են Զէյթունի բոլոր կիրճները և այլայիսով ապստամբներին զկել են ապրուստի միջոցներից:

Դեսպանները խնդրել են Բ. Դոնից խնայել անպաշտական փախստականներին, ինչպէս և կանանց:

* *

28-ին Դեկ. Կիսապաշտօնական աղբիւրից առնւած լուրերի համաձայն, թուրքերի ձեռքը ընկած է Զէյթունի զօրանոցը միայն:

Դ Ա Յ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ց Ի Ն Խ Մ Բ Ի Կ Ռ Ի Ւ Լ

Դ Ե Լ Ի Պ Ա Պ Ա Յ Ո Ւ Մ

Ահա՝ երկու օր է Բասեն գաւառակի մէջ մեր ոտ կոխելը։ Անոր սարսափելի վիճակը գէթ մասամբ կուզէի լոյս աշխարհ հանել, գրի առնելով կատարւող չարութիւնները։ Այս րոպէիս Դէլի-Պապայի քրդաց խուսըն բազմութիւն սոված գայլերի պէս հայ գիւղերը շրջապատած հրացանի ձայներէն ականջնիս կը խլանայ, կը վագենք գէպի հրացան, գէպի մահ...

Արեւ նոր էր ծագել, մեր հայդուկները, որք գիւղի բոլորտիք պահապան էին, թշնամին տեսնելով, ձայն տակն՝ թէ „ժամանակ է, եղբայրք, կամ մեռնիլ, կամ չթողնել, որ հայ ընտանիքն ու զաւակները թշնամու գիրին ըսկնին“։ մեր շրջակայ հայ գիւղերը բոլըն ել ոչնչացան, նոյնը կսպառնայ այսօր և այս գիւղին, գէ՛ ախզրտիք, վատութեամբ չաղտոտենք մեր անունը ու պատիւը։

Երբ թշնամին շրջապատեց Տէլի-Պապա գիւղն և ըսկաւ հրացանի որոտումներով յարձակման նշան տալի մի ժողոված հայդուկները բաժնեցին մի քանի խըմքերի և գիւղի բոլորտիք ամուր գիրք բռնելով, սկսցին կարկտի պէս տեղացնել գնդակները թշնամու գրչին։ Երբ կոխւը սկսեց տաբանալ, երկու հայդուկնեցին երգել՝

„Ազատութեան այն վառ սէրը

Թող որոտայ մեր սրտում,

Իմ Հայրենեաց սուրբ անունը

Ինձ պատերապմ է կանչում“։

Թշնամին թէև 500 հեծեալ չորս կողմից շրջապատած, բայց երբ տեսաւ հայ երիտասարդների անվեհեր սիրտը և քաջութեամբ կուիրը, սկսաւ յետ նահանջել։ Վերջապէս, մինչև երեկոյեան արեւը մտած ժամանակ քանիցս կատաղաբար յարձակւեցին և միշտ կոըրագլուխ յետո վերադարձան։ յաղթութիւնը մերն էր։

Մէկը այլ ևս ոչ նւրոպայի խարուսիկ յոյսերէն և ոչ թուրքի խորամանկութիւններէն կը խարւինք, մենք գիտենք մեր ձանապարհը, միայն մեր հայ եղբարց ու շադրութիւնը կը հրաւիրենք գէպի մեզ, որ արեան և պատերազմի մէջ կը լողանք։

Օգնութիւն, օգնութիւն կը պոռանք, հայ եղբայրներ—Արդեօք թշւառի ձայնին ու աղաղակին լսող կայ: Ներկայ րոպէն կորսնցնել, ժողովաւրդ մը կորսնցնել։

Օգնեցէք մեզ այժմ կամ երբ էք։

Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ն Ե Բ

Կ Ա Ր Ի Ն

Կողմանում են, կոտորում են՝
Աւերում են չափառան։

Մ: Սաֆարիսն

I

Վերջին մի քանի ամսների ընթացքում Հայկական հարցի ստացած այս կամ այն կերպարանափոխութիւնը առիթ է տալիս հազար ու մի ցաւալի մտածութիւնների. մի կողմ կանգնած է վայրագ սույթանի գազանաբարոյ կառավարութիւնը՝ որը կը ձգձգելու և խաբելու աւանդական քաղաքականութեամբ կամենում է ոչնչացնել մի ամբողջ ազգի մարդկային ամենահասարակ իրաւունքները. միւս կողմ տեսնում ես լավիրշ գիպլումատիան, որը բաւականանում է միմիայն կոկորդիլոսի արտասունքներ թափելով և որը ականատես տարիներից ի վեր ուանջով և չարչարող՝ մի բուռն ժողովրդի օրհասական ճնաժամներին, այնուամենայնիւ գեռ անտարբեր՝ զբաղւած է իւր ստորև անամօթ խաղերով. իսկ այս բոլորի գէմ յանդիման կանգնած է հայ անվեհներ յեղափոխականը, որը անհաւասար կռւի մէջ, կուրծքը բաց, շարունակ արեան գետեր է հոսեցնում նշանաբան ունենալով „Ազատութիւն կամ մահ“։

Սույթանի անարդ կառավարութիւնը, որը առժամանակ կարծէք իրերի վասնդաւոր դրութիւնից երկիրդ էր։ կրում և դրա համար չափազանց զգոյշ էր իւր քայլերի մէջ, այժմ համոզած է, որ կարելի է լուսաւոր համարւած աշխարհին բովանդակ մարդկութեան ամօթաբեր փաստեր տալուց յեւոյ գարձեալ մնալ անպատիժ, ձեռնարկեց այժմ իրագործել իւր վաղուց և կազմած ծրագիրը, այն է՝ անինայ կոտորել հայերին Հայաստանում, ինեղել հայի յեղափոխական ոդին իւր երիտասարդ հասակում և դրանով վերցնել մէջտեղից այն կուածաղիկը, որը կոչւում է Հայկական հարց։ Հանգսնել յեղափոխական վառ կրակը, որը հետզետէ սպառնում է հրգեհի կերպարանք ստանենք կատարելապէս համոզած ենք, որ այդ չի յաջուի սույթանի կառավարութեան. իսկ ինչ վերաբերում է կոտորելով ջնջելու սիստեմին, փաստը այս է, որ վերջին մէկ կամ մէկ ու կէս ամսւան ընթացքում մաժկահամբի թւից պահանց առ նւազն 8-10000։

Սամոյ գաղանութիւնները այլևս անցնում են պատմութեան շաբթը. այս րոպէին մենք կանգնած ենք դեռ երեկ կատարած այնպիսի թարմ կոտորածների առջև, որոնք մոռացնել են տալիս մեզ անցեալում պատահածները, այնքան սիրտ կտրատող են տեղի ունեցած փաստերը, այնքան հրէշաւոր և աներևակայելի են ի

գործ դրաւծ գազանութիւնները:

Հայ մարդու դրութիւնը սարսափելի է ներկայում Հայաստանում. ամեն կողմ դժոխք, ամեն կողմ սպանութիւն, ամեն տեղ կողոպուտ. կոտորած Պոլսում, Տրապիզոնում, կոտորած Երզնկայում, Բիթլիսում, Դերջանում, Բարերդում, Մուշում և այն, և այն. և վերջապէս կոտորած Կարինում, որը (ի պարծանս թիւքք կառավարութեան) իւր տեսակի մէջ իւրեւ առաջնը և ամենափայլունը, կարող է սուլթանի կառավարութեան ոհայրական հոգածութեան, նրա շնորհքի, ազնութեան, և ուժի մասին գաղափար տալ անգութ, անխիղճ հանդիսաւ տես եւ սն երին. Այս կոտորածը վերին աստիճանի եղերական է և մենք զգուշանում ենք երկարապատում նկարագրութիւնից:

II

Կարինում հայերի և թուրքերի յարաբերութիւնը վերջին մի ամսւայ ընթացքը պարբերաբար տարածող լուրերի շնորհիւ, հասել էր սաստիկ լարւած դրութեան. յեղափոխական շարժման իւրաքանչիւր փաստը յուղում, կատաղեցնում էր կառավարութեան և ֆանատիկոս մահմեդականներին, որոնք սպասում էին հայերի կողմէց առիթի բոլոր ուժով վեհմենդիր լինելու համար. Կարնեցիք զգում էին այդ և խոյս էին տալիս առաջարի անցնում էին օրերը և ամեն ոք կարծում էր՝ թէ երկրի զանազան մասերում սիստէմատիքաբար կատարւած կոտորածները տեղի չեն ունենալ Կարինում, ուր կառավարութիւնը ըստ երեսյթին ձեռք էր առել ազգու միջոցները: Քաղաքում գտնած զօրքը՝ հեծելազօր թէ հետեւակ, զինան Մարմինի հրացաններով, լաւագոյն ատրանակներով, ամբողջ օրը մեծ խրբերով անց ու դարձ էր անում քաղաքի փողոցները և գլխաւորապէս այն մասերը, որոնք հայերով են բնակեցրած: Յրապիղոնի կոտորածում իրենց դերը փայլուն յաղողութեամբ վերջացնող լազերի հրոսակային խրբերը եկել հասել էին արդէն Կարնյ շրջականները և ամեն կողմ տարածել սարսափ. ճանապարհներին ուղևորները, հայ, անկասկած, կողոպտում էին և սպանում, գրա համար էլ շրջականներում ապրող հայերի յարաբերութիւնը ընդհատւած էր բոլորովին քաղաքի հետ: 12 օր է անցել կոտորածից, և այժմ միայն պարզում են հայերին կառավարութեան վաղօրքը սարքած մեքենայութիւնները. փաստ է այժմ, որ կառավարութիւնը իւր ժամանակին հրաւիրել է քաղաք Բասենի և Օվայի թուրք մեծամեծներին և հաղորդելով նրանց բարձրագոյն հրամանի մասին, հարկաւոր հրահանգները տւել է իւրեանց անելիքների վերաբերմամբ: Այս կարդաբրութեան պէտք է վերագրել այն հանգամանքը, որ կոտորածից մի երկու օր առաջ քաղաք էր թափւել թուրք գիւղացների ահագին բազմութիւն:

Որորդները պատրաստ սպասում էին՝ թէ երբ կը պղտորի ջուրը ձուկ որսալու համար: Առիթը սպասածից աւելի շուտ ներկայացաւ:

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻՉՈՒՑԻՑ

I

Սեպտեմբեր 26-ին (Տ. ա.) Տրապիդոնի շրջակայ աւաններու և գիւղերու պաշիպողութ տաճիկներն, երբ կառավարութեան կողմէ զինւելով, կանոնաւոր զինուորներու հետ հայերուն վրայ յարձակեցան՝ վատաքար և ձեռքէ եկածին չափ չարիքները գործեցին անզէն ժողովրդին, կուսակալ Գամրի պէյն՝ այլ ևս գոհի իր սարքած կեղծուութենէն, հետ ագրատունէն ալ հրաման ըրաւ, որ իսլամ գիւղացիք իրենց դրացի հայ գիւղերու վրայ քալեն և հրմայատակ կործանեն. իսկ քաղաքին մէջ մնացածներուն ալ պատւիրեց, որ թալանի սկսնեն:

Պատահած չարիքներուն ականատես մէկը կը շւարի, կը մնայ՝ թէ որ կողմէն սկսի պատմել:

— Հիմա՝ արիւնահեղութիւնը, լվանք, հրդեհ, վերջապէս ամեն տեսակ ցաւ (որոնք Ցաճկաստանի համար սովորական են) մէկդի ձգելով, վեր առնենք ակնարկով, հայ ժողովրդին վայելած անսպահովութեան համար յուսահատօրէն դէպի ապստամբութեան դիմելու վերջնական շարժառիթը:

Թողունք, որ այժմուս ընդունած նկառավարութիւնը բառը մնեն կը հասկնանք իրը քաղաք ականք ան ացեալ աւագակութիւն. և աիգող՝ „օրէնքներն“ ալ բըռնացիկ շահերնուն ծառայող լոկ զէնքեր. — սակայն սանվ հանգերձ, Ցաճկաստանի մէջ կը տեսնի բացարձակապէս՝ թէ գտնաւծ ամեն պաշտօնելութիւնք բոլորովին անւանական են. ինչու որ տաճիկ տարրը բնականէն կոպիտ ու կրքու ըլլալուն՝ սուլթանական գազանային կամքին հետ միշտ կը կանխեն գծւած օրէնքներն:

Այս, այսպէս ըլլալուն՝ հայերուն համար մանաւանդ, ծամարիտ իրաւունքի արդար բողոքներ յաւելու անլսելի կը մնային և պաշտօնեաներ միայն այն ատեն քիչ մը կը զիջան էին, երբ աւան դական կաշառքը իրենց յօտենար: Այսպանը ոչինչ հայ ժողովուրդը արդէն վարժւած անլուր կերպումներու, չէր կարող կամ չէր ուզեր բոլորովին ինքնամոռացութեամբ անիրաւութեան դէմ կենալ, եթէ բնաւ խղճի, պատոյ, մաքի և հոգու մաքրութեան դէմ սոսկալի դաւաճանութիւններ տեղի չունենային սուլթանի որդեգիրներու կողմէ: Ժողովուրդը մը անհաճոյ հանգամանքներու ներքեւ, երբ կը նկատէ թէ իր գոյութեան իրաւունքը ոչնչալու վրայ է՝ ստիպւած և սուրբ մարտ մը առաջ տանել:

թէւ դէմը ունենայ ամենաստոր բռնապետութիւն մը և մոլեռանդ իսլամ՝ հասարակութիւն մը. երկրքին բոլորովին անընդունակ պահանջին կարևորութիւնը ըմբռնելու. երկւորեակ դժւարութիւն մը, որոնց դէմ անպատճառ պէտք է պատով կուել:

Թերեւս ունանք հարցնեն՝ թէ նկարելի չէ՞ր արդեօք համբերել և այսպէս չը կուորւիլ, քանի որ միւսին կառավարութեան վայրենութիւնները ծանօթ են։ Ո՛չ—Յառաջ տարւած պայքարը միմիայն կը մղւէր անտանելի ցաւերու կծու հոսանքէն. վշտակիր հայը միմիայն կրնար մտածել սիրով մեռնել կամ լինել ազատւած, որ շատ բնական է։ Զէր կարող բաց աշօք տեսնել բռնութիւնք և գազանութիւնք. —իր բորբոքած կուրծքէն սկսաւ ժայթքել կայծ ու կրակ և աշա այս կայծերն ու կրակներն են, որ մկրտւեցան վերջապէս յեղափոխական սուրբ դրօշմով։

II

Արդ, երբ Տրապիզոնի Հ. Յ. Դաշնակցութեան Կոմիտէն կը տեսնէ ոճրագործ Բահրի փաշայի մը պատիւներ մատուցւիլը, այնպէս արիւնարբու հրէծի մը, որ Վասպուրականի մէջ միայն ցաւ ու տանջանք սերմանելով պատուհաս մը դարձած էր, կրնա՞ր դիմանալ ներկայացւած դառն երգիծանքներու։

Կը տեսնէր զինուրական Փէրիք Համոի փաշայ մը, որ իր նախագահութեան ներքեւ եղող՝ ստորագասեալ ներով զինուրագրութեանց ատեն շատ զեղծումներ կը բանեցնէր միշտ ի վնաս թուրք աղքատներուն, կրնա՞ր զայն ալ հանդիստ թողուլ, մանաւանդ երբ Բահրի փաշալի պէս սրիկայի մը պատիւ խնկարկելու առիթը կը ներկայացնէ։

Ի՞նչ պէտք է երկար խօսել. զանազան նկատողութիւններ, որոնք տաճիկ փաշաներու առանձնայասկութիւններն կը կազմեն, պատճառ եղան, որ 1895 թիւ Սեպտ. 20-ին երկու դաշնակցականներ զարկելով՝ վիրաւորեցին զանոնք։

III

Կառավարութիւն ըսւած չըկատղեր, երբ իր գործադրած ծայրագոյն միջներով իսկ չըկրնար գտնել երկու երիտասարդներն, ալ բարկացած էր, նեղւած էր, փրփրած էր. —ծնաւ նոր և ահագին ոխ մալ բոլոր հայերուն դէմ—ալ պէտք էր հայերն իրենց արմատէն վերցնել. հետեւաբար զանաց սուր կերպով գրգռել կրօնամոլ իսլամներն. թուրքեր չեն հասկնար՝ թէ հայուն ջանքը նոյն պէս իրենց համար ալ է։

Հայերն որոշ կը տեսնէին՝ թէ փոթորիկ մը ուշ կամ կանուխ պիտի փրթէր և լաւ կը նկատէին վալին բոնած բոլորովին թշնամմական գիշերը։

Ամեն տաճիկ պետական հրացաններով զինւած, առաջաստի պէս հովեր առած էին. —Սեպտ. 22-ին գիշերը

մի քանի հայ թաղերու վրայ իրենց ըրած յարձակումներէն շատ նեղւեցան և աւելի կատղեցան, երբեմէկ երկու օր վերջ քանի մը տաճիկներ թաղւեցան՝ անոնք, որ երկու երիտասարդները հալածելու պատիւն ունեցած էին։

Սեպտեմբերի 26-ին կուսակալը իր դիմակը վարած էր, անամօթաբար հայ գիւղերու երեւելի երիտասարդները սուտ պատճառներով բերել տւած և բանտարկած էր Վատհոգի խուժանը երես առած՝ սկսաւ խմբով փողոցները քալել և գտած հայուն վրայ վագելով խոզարկել կամ ծեծել, այնպէս որ քաղաքին կեդրոնը՝ ստիկանական խմբի մը առջև, ցերեկը, Սրմենակ Ֆէթֆաճեան անուն պատանին տաճիկներէ պաշարելով՝ չարաչար կը ծեծէր, այն ատեն միայն թող տրւեցաւ, երբ մէկ քանի հայեր միջամտեցին։

Քաղաքին մէջ ապահովութիւն իսպառ վերցւած ըլլազուն, արդէն հայ և յշն խանութներու ամենամեծ մասը գոցւած էին։

Սեպտեմբեր 27-ին թէեւ կսպասւէր արիւնահեղութեան մը, սակայն չէր կարծէր՝ թէ Տրապիզոնի պէս ծովեզբեայ տեղ մը Սասունի բաղդակից ըլլար. մանաւանդ որ շատեր առանց ու է պատրաստութեան տներէն դուրս ելած էին։

Բայց քիչ ատենէն փողի ձայնն, զինւորներու ու պաշիպազուներուն համաձայն շարժւածքն շուտ մը առշեցուց ամեն ոչիսլամներն։

Ի՞նչ անիմանալի լրբութիւններ, որ աշխարհի վրայ կար՝ կատարեցան անտէր հայու գլխուն. կը մնար կամ մեռնել, կամ կուել։

Ամեն կողմ կրակ և արեան լճակներ։ Հայուհեաց իրը զէնք քարն ըլլալով՝ յանուն յեղափոխութեան 10 զոհներ տւին. իսկ այրերը, միասին հաշւելով գիւղացիններ և Հայաստանի ճանապարհորդներ, կը հասնին 975-ի. Հաշէ դուրս են Կարնոյ և Տրապիզոնի մէջ եղող շատ մը անցորդ հայերու զուր կորուստը. որովհետեւ բոլոր պանդոկապետներու և անցքի վրայ գրանող տաճիկ խանութպաններուն կառավարութեան կողմէ ջարդի համար մասնաւոր հրահանգներ տրւած էր։

IV

Մահ կամ Ազատութիւնը իրը նշանաբան ընդունողներէ զոհողներ բաւական ունեցանք. յիշենք մէկ քանին։

Մկրտիչ Գարագաշեան, ուսուցիչ Այս ազատութեան կարագնար ծնած է 1872 թիւն, բոլորովին օգտակար և ազնիւ զարդ մը եղած էր ս. գործին. իր աւագ պատաճանութիւնը սնպած էր կուել վաշնառուներու և բռնութեանց դէմ։ Պոդոսի սրճարանին վրայ պահանջով՝ հերոսաբար կուեցաւ և այնպէս ինկաւ.

Պողոս Կօթողեան, ծնած 1868-ին, իսանութպան, ամբողջութեամբ օգտակար ըլլալու ձգտում ունեցող

կորիւի ատեն զինուորներէ գնդակահայր եղաւ, ինկաւ: Պօղոս Մալխասեան, ուսուցիչ, ծնած 1872-ին, շատ ժողովրդասէր, սիրելի էր իր մտացի և հանրօգուտ ծառայութիւններով: Դիրյունայ աւանէն Տրավիզոն դաւնալուն խումբ մը տաճիկներէ պաշարւեցաւ. մինչև վերջին րոպէն դիմադրեց ու այնպէս մեռաւ:

Պօղոս Միքայէլեան, ծնած 1867-ին, վաճառականի գործակատար. Մէյտան-թաղը, Հաճի Սիմօն, Ֆէթֆաձեանի տնէն իր ընկերներով գէմ դրաւ զինուորներու և աշագին բազմութեան մը, մինչև որ վերջին ոյժը հատաւ: Պօղոս գեռ վիրաւոր՝ արիւնարդու կառավարութենէն հարցաքննեցաւ և չը վարանեցաւ իր ազատ ու համարձակ պատասխաններով տաճկական աղտոտութիւնները երեսի տալ:

Եւ գեռ այսպէս շատեր, ո՞րը թողուլ և որը ընտրել: Զարմանալի էր տեսնել կառավարութեան և տաճիկներու ընթացքը. — առաստ զէնք, զինուորներ և բազմաթիւ հրոսակներ չէին բաւեր, երբ տեսան՝ թէ Խսկէնտէր փաշայ թաղը վաճառական Հաճի Մարտիրոս Տրավիզանի տնէն երկարաւան և յամառ դիմադրութիւն մը տեղի կունենայ ու հինգ զինուոր ալ կիյան, անամօթաբար զօրանոցէն թնդանօթ մըն ալ բերել կուտայ տանը մօտ սակայն աւան, որ արդէն ուղմամթերքնին հատած էր: Կուողներէն միայն մէկ զոհ. մնացածներն կապրին: Ալ գժւար կը թւի փողոցներու կամ անկիւններու մէջ քաջութեամբ դիմադրողներու մղած կորիւը պատմել: Երաւ որ հայերուն ոյժը միւսներուն հետ համեմատել կարելի չէ, սակայն ամեն մէկը յօժարութեամբ զիշեցաւ և մենք, մնացածնին՝ երանի՛ կուտանք անոնց:

Խ Ա Բ Բ Ե Բ Դ

գիւղերէն մէկ հատ հայու գիւղ չէ մնացած, բոլորն ալ մոխրակոյտ եղած են, իսկ բնակիչները մէծ և փոքը ջարդաւած: Քանի մը հոգի միայն մօրէ մերկ փախան, որ կեանքերնին ազատեն, բայց անոնք ալ ձամբան չարաչար սպանւեցան: Մէկ մասն ալ ճարահատեալ մահմեդականութիւն ընդունեց:

Մահմեդական և հայախառն քանի մը գիւղերու տուները չալրեցին, բայց ինչքերը ամբողջովին կողոպտեցին և բնակիչները սուրէ անցուցին. իսկ փախողները մերկ ու անօմի կը թափառեն: Մէկ քանիին մահմեդականները պաշտպան կանգնեցան, բայց ետքը զանոնք մահմեդական դարձուցին:

Խոյլու, Խադրմ, Քէօրփէ, Պիզմչէն և Սիւրսիւրի գիւղերը այնպէս աւերակ ըրին, որ հիմա տեղերնին անգամ յայտնի չէ. մարդ կը վարանի հաւատալ՝ թէ հոն երբէք գիւղեր կային: Բալու ասկէ աւելի գէջըն մը զիշեցած, Խարբերդ քաղաքը բաղդատարար աժան պրծաւ, թէպէտ ամբողջովին կողոպտեցաւ: Բայց շատերը կեանքերնին ազատեցին կամ մահմեդականներու տուներ ապաստաններով և կամ մահմեդականութիւն ընդունելով, այս վերջինին հետևողները օր ըստ օրէ կը շատանան, վասն զի պարելու ուրիշ ճար չկայ:

Հիւսէյնիկի մէջ 300 հայ սպանւած է, 300-ի չափ ալ վիրաւորւած: Տուները ամբողջովին կողոպտւած են, բայց չեն այրած: Պատճառը սա էր, որ ողջ մնացողները ամբողջովին մահմեդականութիւն ընդունեցին. քրիստոնեայ անունը կրող հայ բնաւ չկայ: Տասը օրէ ի վեր հիւսէյնիկցիք հինաւուրց մահմեդականներու պէս կանոնաւոր կերպով մզկիթ կերթան նամազ ընելու:

Քէսիրիկ ալ բոլորովին աւրշտկւելէ ետքը ժրդովարութիւն մահմեդական եղաւ:

Խարբերդ քաղաքին այն գեղեցիկ թաղը որ Տալ-Գաբուէն ելած ատենդ կերևի, բոլորովին կողոպտւելէ ետքը, 8-10 տուն քարիւղով կրակ տւին, ամրող թաղը մոխրի վերածեցին. Հրդեհը 6 ժամ տևեց: Քաղաքին մէջ շատ հայ չի ջարդւեցաւ, միայն 100-ի չափ սպանւած, 150-ի չափ ալ վիրաւորեալներ կան: Ողջ մնացողներուն շատերը մահմեդականութիւն ընդունելով պատեցան: Հաւատափոխներէն շատերը աղքատ, ծեր, խեղճ մարդիկ են. աչքի երեցողներէն հազիւ մէկ երկու հոգի մահմեդական եղած են, որոնցմէ մէկն է Աստանալեան Յարութիւն. սա շատ հարուստ ըլլալով բոլոր ինչքը կողոպտւեր է:

Քաղաքը կողոպտողները անչափ շատ բան ունեին հետերնին տանելիք, որ շատեր չէին կընար շալկել: ուստի ստիպւած էին յաճախ թանկագին բաները աժան ծախել, այնպէս որ երեք ծրագր(թօփ) չունան 25 դաշեեկանի ծախւեր է. մինչդեռ իսկական գինը 10-15 ոսկիէ պակաս չէ:

Դեռ Մէքփիրէ չէ կողոպտւած. Տուստափա փաշա չկ

Առէ 15 օր առաջ Խարբերդի գիւղերը ջարդել սկան: Նախ Շեյխ-Համձի գիւղէն սկսան, բնակիչները կոտորեցին, ստացւածքները կողոպտեցին, տուները այրեցին մախիր դարձուցին: Վերակ դարձան նաև իշմէ, Հապուսի, Ախսու, Աէօնիք և ուրիշ բոլոր հայ գիւղեր, որոնց բնակիչները աւանց հասակի և սեռի խրութեան կոտորւեցան: Թշնամին բոլոր ստացւածքները կողոպտելէն ետքը, քարիւղով յարդանոցները, խոտի մարադները և աժմարի (չոր թրիքի վառելիք) գէղերը կրակի տւաւ: Այսօր այդ 200, 300, 450 տները գիւղեր այն աստիճան հիմնայատակ եղած են, որ տեղերնին անդամ յայտնի չէ: Այդ գժւախտ գիւղերը շարաբն մը շարունակ պիտի չափուած, մուխը մասակուողի պէտ պատած էր ամեն կողմ:

Թէ Խարբերդի թէ՛ Բալի և թէ՛ Զարսանջակի

թողուր եղեր: Բայց բոլորտիքը տաճիկ ամբոխը պաշա-
րած է. փաշան անսոնց ողեր կեցէք՝ կըսէ եղեր:

Փաշայի այդ վարմունքը գաղտնիք մը է մզի համար:

Խարբերդէ (30 Հոկտեմբ.)—կը գրեն թէ գիւղեն
ու քաղաքը արիւնով ու կրակով շաղախւած են. Ամ-
րիկեան միսիօնարներու ուժ շենքերն ալ այրւած,
թալանւած են:

ԲԱՍԵՆԻ ԳԻՒՂԵՐԻ ԱԿԵՐՈՒՄԸ

Բարենորոգումները Տաճկահայաստանին մէջ տակա-
ւին կը շարունակին. որաբեգութ ուղղվանին՝ շնորհի-
ուուոյ, Տրապիզոնի, Երզնկայի կոտորածներէ վերջ, տա-
ճիկ կաւալարութիւնը քիւրդին հետ ձեռք ձեռքի տը-
ւած սկսեց ելնել հայ ժողովոդին դէմ աջ ու ձախ
կոտորել թալանել ու ոչնչացնել հայ գիւղերը. Կարի-
նից միայն սարսափելի լուրեր են գալիս. Երթևեկու-
թիւնը բոլորովին ընդհատւած է. եթէ լսում է այս
կամ այն գիւղի ոչնչացումը կոտորածը, այն էլ թուր-
քերից, քիւրուերից է լսում Քանենի Հարսներար, Խշուու,
Խոզվերան, Էգեապատ, Հերթա, Քրդապաղ, Տօդի, Ճրասոն,
հայ գիւղերու ինչքը, ոչխարը, տաւարը, վերջապէս մին-
չեւ անդամ հաւերն էլ կողովտելով տարել են: Հայ
գիւղացիք ճարահատեալ ցիր ու ցան են եղել, ոմանք
ապաստանելով հայ գիւղեր, ոմանք քիւրդ գիւղեր:
Խեղճ ժողովուրդը մշուշի մէջ մոլորւած կոռուսի նման
փախչում և էլի թշնամոյն ճանկն է ընկում: Խոզվե-
րան գիւղացիք, երբ ցիր ու ցան եղան, երկու օր յե-
տոյ մի քանիսը վերադառնալով, երբ կը ջանան մի
քանի բեռ հաց հացնել իրենց թշւառ զաւակներին,
քիւրդերը յարձակում գործելով չորսը կսպանեն և
մնացածները հազիւ հազ կազատին: Ճրասոն գիւղը կո-
ղապտելու ժամանակ կսպանի քերովք անուն հայն: Ս-
մեն մի արիւնարսու քիւրդ ցեղապետ պատրւակ բռնե-
լով՝ թէ կառավարութիւնը զիրենք յատկապէս զար-
կել է հայերի պահպանութեան համար, հայ գիւղի մէջ
մտնելով լուր են ուղարկում թուրքերին և քիւրդերին
շուտով գալ և աւարել:

Արթարանը դեռ չը բացւած խեղճ. գիւղացին կը
տեսնէ շըջապատւած ահագին սովալուկ գաղաններով:
Այսպէս կասպանցի քիւրդ ցեղերի ցեղապետը՝ Ռէշիդ
պէյ պահպան լինելու պատրւակաւ մտնելով Տօդի
գիւղը, շըջապատել կը տայ իւրայիններով. Ռէշիդ պէ-
յը սարսափ գցելով գիւղացիների վրայ, կըսէ՝ “Զեր
մէջ կան յեղափոխականներ, եթէ կը յանձնէ՝ ձեզ
համար ոչինչ չկայ”։ Գիւղացիք երբ կը պատասխաննեն՝

թէ ո՞չ ոք չկայ մեր գիւղը”, կսկսեն իրենք գիւղեց
և իրենց ընկերները գրսից գիւղը կրակ տալ: Ժողո-
վուրդը ճարահատեալ կը թողու իւր տուն ու տեղը
կայքը ու ինչքը և կսկսի փախչել դէպի Տէլի-Պապէ
գիւղը: Բայց այդ արիւնարսու թշնամիք աւարառու-
թեամբ, հայի քրտանց աշխատութեամբ չը բաւակա-
նանալով կսկսին կանանց ու աղջկերանց ետևէն հետա-
մուտ լինել և հրացանի գնդակները կարկուտի պէս
տեղացնել: Կանանց ու աղջկանց, մանր երեխաների ողնու-
ու աղաղակը քարեր կը թնդացնեն, որք թողով իրենց
մատղաշ զաւակունքը՝ կը փախչեն. վերջապէս հազիւ
կը համանեն Տէլի-Պապէ հայ գիւղն, որի շըջակայքը
հայդուկներն էին ըռնել: Քիւրդերը այդ գիւղից եօթ
անձ բռնելով՝ գերի են տարել և չորսը վերաւորել են:

* *

Քէմախէն կը գրեն նոյեմբ. Զ թւականաւ. Օվաճու-
ղի քրդերը պետական զէնկերով եօթն անգամ յար-
ձակեցան Հաղպարք գիւղն վրայ, աներն թալանեցին և
ի միջի այլոց սպանեցին երեելի յաղթանգամ և քաջ
Մէզէյ էֆ. Ադամը: Հաւաստի լուրեր կիմացնեն, թէ
Ամասեայի մէջ եղած կոտորածին 1000 հայ սպանւած է,
իսկ Մարզւանի մէջ 500:

Շատ տեղերէ եկած նամակներ սովոր վրայ կը գրեն.
ատեն մը կարողութեան տէր եղող անձննք՝ չկննալով
հիմայ մուրալ կամ գողնալ, ցուրտէն և այլ և այլ
տառապանքներէ կը մեռնին:

Ա. Պոլսի Դաշնակցական Կեդրոնական Կօմիտէի ան-
ցեալ շաբաթ հրատարակած № 4 „Թուուցիկ թեր-
թից“ քաղում ենք հետեւալը.

“Մեր ժողովրդի, մեր դատի ոչնչացման այս չարագուշակ
առթերուն առջեւ Եւրոպան կը յորդորէ մեղ լոել ու համ-
բերել Բայց ի՞նչ արդիւնք ունեցաւ մեր լուրթիւնը Սա-
սունի կոտորածն ետքը: Զէ՞ որ պատրիարքը տարիէն ա-
ւելի է, որ ամեն օր կը բողոքէ, ո՞վ լսեց. Ո՞չ, լալով բան
ըլլար, մեր արցունքը ծաղրեցին մինչեւ կիմա, Սասուն կո-
տորուեցաւ, համբերէք ըսկն. Տրապիզոնի համբաւաւոր
ջարդը եղաւ, համբերեցէք ըսկն. այսօր բոլանդակ Հայա-
տան արիւն կուլայ եւ զեռ համբերել կը յորդորեն մազ-
ի՞նչ, այնչափ ակներեւ, լոյսի պէս պայծառ իրողութիւն-
ներէն ու փաստերէն եւրոպան կը չուզեր
ճանչնալ արիւնկղակ սուլթանին անմիջական հելինակն
Յուլլալը այդ ոճիրներուն. —ալ ի՞նչ կսպասէք անսնցմէ: Յու-
լլալը մի՛ գնէք Եւրոպայի վրայ. մարդասիրութիւն բառը
գոյութիւն չունի անոնց բառզրկութիւն մէջ: Մեր ապաւէնը
յեղափոխութիւնն է, այն միակ միջնորդը, որ կտանը տուն-
իտալային, Ցունաստանին, Սերբիային, Զեռնագորիային
ու Բուլղարիային:

Համբերել, այսուհետեւ մահ է մազի համար:

Վրէժ ու զինքով պատասխան մեր գոյութեան թշնամիներուն, ահա այս միակ գործնական ճամբան, որուն վրայ կոփեց Զէլթունը ապատամութեան դրօշակը պարզելով Տաւրոսի բարձունքներուն վրայ:

Զէլթունի քաջնրը, որոնք եւ ոչ մէկու դասերուն կը կարօտեն աղատութեան պահանջը ըմբռնելու կամ հրամանին ոտքի ենելու համար.—Կիրկիրոյ մէջ եւս սկսան կոտորածներէն կատած, նորէն զլուխ բարձրացուցին եւ առաջին անգամէն գերի բանեցին 600 պահնորդ զինսորները այն նույնաւոր բերդին, որ վաս հայու մը Յովհաննէս Նորեանի դաւաճան խորհուրդով շինել տուած էր թուրք բռնապետութիւնը Զէլթունի սրտին մէջ: Ամբողջ աշխարհ տակն ու վրայ եղաւ Զէլթունցոց այդ յաղթանակէն, բայց առանք եւ դաս մը ալ որ տէին թուրքերուն, գործով ապացուցանելով իրենց քաղաքակիրթ ազգի մը զաւակն ըլլալը, մարդավարութեամբ վարուեցան այն գերի զինսորներուն հետ, որոց ընկերները անպաշտապան տղաքն ու կիները Ակած ու սպանուած էին:

Հն դարձած են հիմայ Եւրոպայի ու Բուրքիոյ սարսափած աչքերը, ցորչափ Զէլթուն յաղթական շարունակչ մնալ իր անառիկ լիներուն վրայ, ոչ թուրքիան եւ ոչ Եւրոպան պիտի կրնան Հայկական դասը մարելու եւ ահա այդ ըմբռներով ամճ միջոց կը գործածուի զինաթափ ընելու Զէլթունը...

Բայց ոչ Զէլթուն պէտք չէ որ նուանուի եւ չպիտի նըւաճնի...

Կեցցէ Զէլթուն, կեցցէ ապատամութիւն
Հայեր, օգնեցէք Զէլթունին:

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կենտրոնական սնդուկին մէջ ստացւեցան.

Մ. Մ. 50 օսմանեան ոսկի, Այգեստան 175 րուբ., Կ. Կ.-ից 25 րուբ., Այգեստանի Մար-Շիմոնից 20 րուբ., Խականապատ 1000 րուբ., Դ. Զ.-նի մի խումբ կանացից 40 րուբ., Թ. ք. մի խումբ մարդկանց ձեռքով հանգ. 500 րուբ., Հ. Ա. պ. 50 րուբ., Սոյն տեղից կանաց ձեռքով հանգ. 33 րուբ.:

Արմ. Ք.-ից 100 րուբ., Պ. Պ. Ք.-ի Գինեգործից 250 րուբին:

Գետակ քաղաքի Հոսանքից 25 րուբ. 80 կոպ.:

Արշակաւան քաղաքի Կեդրոնական սնդուկին մէջ ստացւած են.

Վարդանեան Խ. 20 դահեկան, Արշայր Խ. 60 դհ., Դիրձակ 20 դհ., Հայուհի 20 դհ., Աղատական Խ. 20 դհ., Արծիւ Խ. 50 դհ., Մկրատ 20 դհ., Ծաղիկ Խ. 70 դհ., Արակ Խ. 70 դհ., Պայմուցիկ Խ. 10 դհ., Գործիք Խ. 10 դհ., Օշխ Խ. 25 դհ., Ալիս 20 դհ., Բինեա 10 դհ., Պետրոս 20 դհ., Ա. Գ. 10 դհ.:

Արշակ քաղաքը մեր մէջ ստացւած են.

Աէր 20 դհ., Աւ-Կարմիր 22 և կէս դհ., Յառաջա-

դիմասէր 100 դհ., Մասիս 40 դհ., Հարւած 10 դհ., Կեռսա 10 դհ., Ցորեն 10 դհ., Վ. Ստեփան 10 դհ., Մ. Ն. 10 դհ., Մ. Ի. 20 դհ., 2. Ի. Կ. 10 դհ.:

Հայկաւանէն. — Առիւծի խմբէն 7 մէճիտ, Հայաստան 1 մէճիտ, Վահէ 1 մէճիտ, Սէնթրէմէքէ խմբէն մէկ քառորդ օսմ. ոսկի, Սանուց քաղաքի Պարզ խմբէն 3 մէճ, Վրէժ 1 մէճիտ:

Օձէն. — Կ. Ա. 108 դհ., Մուր 112 դհ., Խարիս 324 դհ., Տոմար 1080 դհ., Գրիշ 540 դհ., Աննշան մէկը 20 դհ., Թնդանօթ 30 դհ., Շանթ 50 դհ., 20 դիր., Կայծակ 216 դհ., Էնի 100 դհ., Կամաւոր 20 դհ., Մահ 108 դհ., Մարկոս Մարկոսսեան 3240 դհ., Անանուն 40 դհ., Ճերմակ 100 դհ., Արշալյուս 540 դհ., Հայասէր 80 դհ., Սիրանյշ 324 դհ., Մելան 540 դհ., Աթոռ 30 դհ., Ցոյս 20 դհ., Հաւատք և Ցոյս 540 դհ., Կարապնտ 540 դհ.:

Քուշանաց քաղաքէն. — Ստեփան Պետրոս 40 դհ., Ս. Շ. 55 դհ., Ն. Բ. 40 դհ., Տ. Պղինձ 20 դհ., Նուապար Պարսիկ 200 դահեկան:

Պէպինիէր քաղաքի Հայ ուսանողներից 65 ֆրանկ:

Բ. քաղաքի Հայ ուսանողներից 250 մարկ:

Արիպակներ. — Անցեալ տարւայ № 20-ի մէջ տպւած է „Նարինց 540 դհ.“ պիտի լինի՝ Ոչինչ 540 դհ.: № 21-ի մէջ՝ „Նապարապ 35 օսմ. ոսկի և 5 ոսկի թղթադրամ“ պիտի լինի՝ 35 օսմ. ոսկի, 5 ոսկի թղթադր. և 9 անգլ. ոսկի:

Տեղի խիստ սղութեան պատճառով անկարող լինելով զետեղել ՝ “Դրօշակի” մէջ Կարինի կոտորածին վերաբերեալ մեր ստացած մի քանի այլ տեղեկագրերը մենք այդ լցոյ կընծայենք առանձին գլուխկով:

* *

Թիւրիմացութիւնների տեղիք չամար, ստիպւած ենք մեր նոր հասցէն գարձնել ՝ “ԱՐՄԵՆ-ԳԱՍՊԱՐ” որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշագրութիւն:

Խմբագրութեան հետ թղթակցողներից ինդրուս է բացառապէս դիմել այդ նոր հասցէով:

Դաշնակցութեան անծանօթներից լինուում է թղթակցութեան և նւիրատութեան համար գիմել:

Arméne-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիննա, Դաշնակցութեան պատասխան:

ԹՐՈՉՈՒԿ

,,ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԴԱՆ

ՏՎԱՐԻՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սուլթանի կառավարութիւնը անկարող լինելով բռնի, զէնքի ոյժով խոնարհեցնել ապստամբ Զէյթունը, այժմ եւրոպական պետութիւնների աջակցութեամբ ուսաղաղ միջոցով՝ է ուզում հասնել իւր նենդաւոր նպատակին:

Երկու թշնամինները „Հաշտեցնելու համար“, եւրոպական պետութիւններն էլ „միջնորդի“ գերը իրենց վոյ են առել և արդէն բանակցութիւնները սկսել են:

Զէյթունցիններին առաջարկած սուլթանի պայմաններն են՝ ապստամբների գլխաւորութեան, զինաթափի լինել և իրենց քանդած զօրանոցը վերաշնել որոնց հետ կատարելապէս համաձայն են „մարդասէր“ ու „միջնորդ“ եւրոպական պետութիւնները:

Երբ Մեծ-ոճրագործի մարդասպան սուրբ շողշողում էր Հայաստանի գլխին ու անխնայ կոտորածներ անում, և գեռ շարունակում են այդ գժմախտ երկրից արեան դոլոշիններ բարձրանալ, այդ սարսափի բոպէններին, այսօրւայ „միջնորդները“ լոկ ոհանդիսատեսի“ գեր կատարեցին: Խակ այսօր, երբ այդ ոճրագործը անկարող է լինում եղբայրների արեան վրէժինդիր եղող մի բուռն քաջերին խոնարհեցնել, ճիշտը՝ կոտորել, նրանք, եւրոպական պետութիւնները, շտապում են „միջնորդ“ դառնալ, որպէս զի այժմ էլ այդ միջոցով ազատ մընաց մասին ենթարկել տան Մեծ ու Փոքր Հայաստանում ապրող նրանց եղբայրների ճակատագրին: Եթէ ոչ, ինչո՞ւ այն ժամանակ էլ չէին առաջարկում իրենց միջնորդութիւնը՝ առաջն առնելու այն կոտորածների, որոնք պատմութեան հազորիւտ գէպէրիցն են իրենց սարսափով, իրենց հակամարդկային բնաւորութիւնով, ինչո՞ւ չէին հաշտութիւն առաջարկում: Որովհետեւ գիտէին, որ Մեծ-ոճրագործը մեծ գժւարութիւնների չէ հանդիպի: Ահա գարձեալ և գարձեալ փաստ ու շատ բնորոշ փաստ, որ գիպլօմատիան բարեկամ չէ տանջւողների ու թոյերի, որ նրա համար ոչ մի նշանակութիւն չունին մարդկային գոհերը, որ

նա զեկավարում է միայն իւր պետական շահըրով: Ահա գարձեալ մի փառաւոր, բայց արիւնով ներկան փունչ, գիպլօմատիայի վայ յոյս գնողներին, գիպլօմատիական միջոցներով գործողներին:

Եւ գիպլօմատիայ կոչւածը այն աստիճանին հեռու է գնացել, նա իւր անխողութիւնը ու անամօթութիւնը այն աստիճանի լրտութեան է հասցրել, որ առաջարկում է ոչ միայն զինաթափի լինել, այլև մինչև իսկ ապստամբների գլխաւորներին յանձնել սուլթանի կառավարութեան: Ի՞նչ յանձնել ապստամբների գլխաւորներին, մատնել ահա, բարոյական հրէշներ:

Ամբողջ ժողովուրդը մարտիրոսացնելուց յետոյ, այսօր էլ ուզում են նրան բարոյապէս մեոցնել, ստորացնել, նրան ուզում են մատն ի չ դաւաճան դարձնել:

Զէյթունցին մատնիչ դաւաճան, այն զէյթունցին, որ կարող է մարդկային արժանապատութեան դասեր ու կարող է մարդկային արժանապատութեան դասեր ու կարող է մարդկային գործակիցներին, այն զէյթունցին, որ արհամարում է մահը և կուրծքն ու ճակատը բաց հապարտութեամբ գէպի մահ գիմում: ոչ նա ինչ բաց հապարտութեամբ գէպի մահ գիմում: Ապստամբ լինելով ապստամբ էլ մայ, բռնակալութեան դէմ կուի դրօշակ բարձրացրած լինելով, նա կը կուի, լցւած վրէժինդրական ոգով, վրէժինդիր կը լինի, նա թոյլ չե տալ իւր եղբայր անշնչացած դիակը. և թող ոճրագործը, մարդասպանը ու նրա մեղսակիցները զւարձանան ազատութեան համար քաջութեամբ ընկած դիակով..

Բայց հայ ժողովուրդը թոյլ չե տալ որ Զէյթունն էլ ընկնի, նա նրան օգնութեան կը հասնի:

Կուի է ամեն տեղ, ամեն կէտում:

Եւ հայ ժողովուրդը իրը մի ամբողջութիւն պիտի կանգնի, ձեռք մեկնի արեան մէջ լողացող, կեանքի և մահւան կուի մղող տաճկահայ եղբայրներին, նրանց սիրտ ու թիկունք տայ:

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ԵԽՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԾՐԻՑ

(ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ)

31-ին Դեկտ. Դուռը ԶԵՅԹՈՒՆԻ մասին պետութիւնների առաջարկածը ընդունեց: Հալէպի օտար հիւպատունները ԶԵՅԹՈՒՆ պիտի երթան՝ անձնատրութեան համար բանակցել:

31-ին Դեկտ. „Թայմզին“ Պոլսից հաղորդում են՝ Մուստաֆա փաշան՝ ԶԵՅԹՈՒՆԻ գունդերի հրամանատարը հրահանգ է խնդրել Դունից, խոստանալով 1 ժամւան մէջ ամեն ինչ վերջացնել:

2-ին Յուն. Դուռը ընդունեց Հալէպի օտար հիւպատունների միջնորդութիւնը՝ ԶԵՅԹՈՒՆԻ ապստամեններին հնազանդութեան բերելու համար:

ԶԵՅԹՈՒՆԻ ապստամբւած հայերը ի պատասխան հիւպատունների միջնորդութեան առաջարկին, պայման են դնում նաև, որ այսուհետեւ իրենց միջից ընտրւած կառավարիչ ունենան:

9-ին Յուն. Թուրք պաշտօնական աղբիւրները բացէ ի բաց հերքում են մամուլի կողմից հրատարակւած այն լուրը, որով տաճիկ գունդերը ԶԵՅԹՈՒՆԻ առջև գազանութիւններ են գործ զրել: Նմանապէս հերքում են այն լուրը, թէ թրբական բանակների միջից ընտրւած կառավարիկը են եղել.

15-ին Յուն. Յունար 10-ի ժողովի մէջ, վեց պետութիւնների ներկայացուցիչները զեաղեցան ԶԵՅԹՈՒՆԻ հայ ապստամբների խնդրով: Գրանսիայի և Ռուսիայի դեսպանները առաջարկեցին, որ միջնորդութեան բանկցութիւնները Հալէպի մէջ կատարեն, բայց Անգլիոյ դեսպանի պահանջման վրայ որոշւեցաւ, որ նոյն իսկ ԶԵՅԹՈՒՆԻ մէջ կատարեն:

Հիւպատունները հրահանգ են ստացել այս բանակցութիւնների ժամանակ համաձայն Դուն որոշման շարժի: Նրանք պէտք է պահանջեն՝ որ ապստամբների կլիւռունները յանձնեն և պիտի ներկայ գտնեն միջնորդութեան պայմանների գործադրման:

Բայց եթէ առաջարկւած պայմանները ըընդունւին, հիւպատունները պէտք է ետ դառնան:

Հիւպատունները մօտերս պիտի ճանապարհին:

Յայտնի չէ՝ թէ ԶԵՅԹՈՒՆԻ բնակիչները ինչ առաջարկութիւններ պիտի անեն, միայն հաստատ է, որ նրանք պիտի մերժեն յանձնել իրենց զէնքերը և գրւ խաւորները:

16-ին Յուն. Կը ծանուցանեն՝ թէ թուրք գունդերը եղանակի վատութեան պատճառով՝ պարտաւորեցան Մարաշ քաշւել:

Նախապատրաստական մի ժողովի համար պիտի Մարաշ գան և թուրք կառավարութեան ու հայ ապատամբների մէջ միջնորդութեան համար ուղարկած հիւպատունները. վաղը, հինգշաբթի կը մեկնին Հալէպից և Զէյթուն կը համնին 4-5 օրից:

ԿՈՏՈՐԱԾՈՒՅՈՒՆ

ԿԱՐԻՆ

Կողոպում են, կոտորում են,
Անձում են չայաստան:
Մ. Սաֆարեան

III

Հոկտ. 18-ի օրը սովորականից աւելի շարժում և իրարանցում էր նկատում զօրքերի և թուրք ժողովոդի մէջ. այնուամենայնիւ հեռի այն մաքից՝ թէ հենց այդ օրը տեղի պիտի ունենայ մտադրւած զարդը, որի հրամանը Պոլսից ստացւել էր արդէն, հայերը՝ միամիտ, աներից գուրս էին եկել փողոցները և իւրաքանչիւր ոք ըստ սովորականին գտնուում էր իւր գործի գլուխը:

Կէսօրւան ժամի 12-ին (ը. ե.) հազիւ թէ ուսուաց հիւպատուը վերադարձել էր նահանգապետին և տըրի բահուչակ Ծաթիր փաշային արած սիրալիր այցելութիւնից... հնչեց զինւորական (պայմանական ի հարկէ) փողը և զօրքերին. և թուրք ամբոխին տւեց գործի սկսելու—կոտորելու նշանը: Այլևս կարող էր երևակայել Յարձակման առաջին զոհերը եղան կառավարական ապարանքում, արդարութեան դատարանների առջև դեգրող մի քանի հայեր, որոնց մէջ է եղել և Դվինի գիւղի քահանան: Սպանելով դրանց նոյն իսկ կառավարական ապարանքում, կառավարութիւնը նպատակ է ունեցել ի հարկին հաւատացնելու, թէ հայերը յարձակում են գործել կառավարչական հիմնարկութիւնների վրայ, ուրեմն և սպանել կուրի ընթացքում Քահանան գեռ երկու օր առաջ լազերի ձեռքից հազիւ ազատել էր կեանքը՝ 4-500 սկու հասնող կարողութիւնը ամբողջապէս կողոպուտ տալուց յետոյ: Փողոցներում թափւած զօրքը սկզբում գնդակահարում էր որոշ հեռաւորութեան վրայ, շփոթութիւնը սաստիկանելու համար, բայց հենց որ շարժւեց կատաղի ամբոխը, այնուհետեւ զօրքը մտաւ իւր իսկական գերի մէջ—սպանել պատահող հային՝ մաննաւորապէս հասակով երիտասարդներին, մերկութեան աստիճան նրանց կողոպութելուց յետոյ: Հրացանների որոտումը լսելիս՝ ով ժամանակ է ունենում կամ միջոց, շտապում է փախողւստ տալ դէպի տուն, բայց իւրաքանչիւր քայլի վրայ պատահում զինւորների և ընկնում գնդակահար. իսկ ով ժամանակ չի գտնում՝ յանձնականնութեան մէջ, մըտնում է իւր խանութիւնի կամ մակազինի մի իորշը և

սպասում չարաշում մահւան: Մի կողմից կատաղի հրացանաձգութեան տակ, անշնչացած դիակների կոյտեր դիզում: Էին փողոցներում, միւս կողմից զօքը և ամբոխ զբաղւած էին թալանելով՝ բաց մնացած այն խանութեները և մակազինները, որոնք պատկանում էին հայերին: Յոյները կառավարութեան առանձին պաշտպանութեանը վայելեցին և դրա համար էլ ոչինչ վնաս չկրեցին: Ըստ մակազինների և կասանների փակ դըները բանալու համար, ամբոխ դիմում էր զօքի օդութեան, որը հրացանի մի քանի հարւածով իսկոյն բաց էր անում կողաքէքը: Բաւական չէ, որ մէկը մարթինի 6-7 հարւածների տակ ընկնում էր անշունչ կատաղի թուրք ամբոխը՝ զինւած հրացաններով, փայտերով և այլն, ամենանողակի անարդանքների էր ենթարկում դիակներին: Սուբաշիղուլը էր մորթել և քերթել են ոչխարների պէս: Ամանք միամտաբար, կարծելով որ զօքը խաղաղութիւնը վերականգնելու և անզէն ժողովորին պաշտպանելու պաշտօն ունի, իրանց յանձնել են զինւորների պաշտպանութեան, ամեն բանից կողոպտել և դարձեալ սպանւել: Այսպիսիներից է ի միջի այլոց յայտնի վաճառական և քաղաքային ժողովի անդամ Յարութիւն ֆէրման եանեանը, որը ընտանիքին օգնութեան հասնելու համար, դուրս է գալիս իւր ապահով ապաստանարանից, չաւատում զինւորներին, որոնք նրան առանում են ուղղակի պահականոց և նրա առջև թալանելուց յետոյ, սպանում չարաչար: Մէկը՝ գերձակ Ալեքսան, 46 ոսկի տակիս է մի հարիւրապետի՝ կեանքը աղատելու համար, բայց դարձեալ սպանւում է սրտամիկ մահով: Վաճառական և ուսումնական ժողովի անդամ Գոնդակձեան Արմեն ակին նզնպէս սպանում են զինւորները հենց իւր տանը առաջ և անխնայ կտրատում ձեռքերը, ականատեսները պատմում են այն զօրել դիմադրութեան մասին, որը ցոյց է տւել Գոնդակձեան երկար ժամանակ բէզօլվէր ի ձեռին: Հայերից շատերի մօտ գտնել են ատրճանակներ, և ով դիմել է ինքնապաշտպանութեան, պատահել է զինւորների կողմից ամենազօրել յարձակման և կարճատե դիմադրութիւնից յետոյ սպանւել քաջաբար—ի՞նչ անի արձանակով զինւած մի մարդ՝ տասնեակ զինւորների և խուժամուժ ամբոխի հետ: Ըստ մարդիկ գեռ ևս բարեբաղդութիւն չեն ունեցել գնդակահար լինելու, մահւան յետին ճգնաժամը համեմատաբար մեղմութեամբ անցկացնելու համար, այդպիսիներին՝ մանաւանդ զէնքով դիմադրութիւնին, մորթել են ոչխարի պէս իրանց մակազինների կամ խանութների առջև. շատերից մէկն՝ կօշկակար հաճի Ստեփանի ամենաեղերական մահը կարնեցիների յիշողութիւնից չի հեռանալ յալիտեան: Մի խումբ մարդկանց էլ տասնեակ վէրքեր տալուց և սպանելուց յետոյ, դիակների վրայ նաև է են ածել և այրել՝ դիւական քրիչներ արձակելով: Ի միջի այլոց, այդպիսի անարդանքի ենթարկել են իւսութեան գարեգին, Ղալէմբէրեան կարապետ, Քիրիշձեան Պողոս, Տիլերան Ստեփան և այլն: Դէպքին յաջորդող օրը ով ներկայ գտնուէր հայոց գերեզմանատանը՝ ականատես կը լինէր այն սրտամիկ տեսարանին, որը երկրորդ անդամը լինելով՝ պարզում էր կարնեցիների աչաց առջև: Հարիւրաւոր արիւնաշաղախ, բոլորովին մերի

և այլանդակութեան աստիճանի հասցրած դիակներ մէկ միւսի մօտ փոււած էին բաց տարածութեան վրայ, որտեղ թափաւած էր արտասուքների մէջ հառաջող թշւառ հայերի բազմութիւնը, ճանաչելու դիակներին և գտնելու իւրաքանչիւրը իւր հարազատին: Կոտորածի դիշերը համարեալ ոչ ոք չէր կարողացել հասնել իւր տունը, այլ որտեղ կարողացել էր ապաստանած մնացել էր, մինչեւ 2-3 օր հազիւ կարողանում էր մէկը գտնել իւր ընտանիքի անդամներին:

Ն. Ա. Մ. Ա. Կ Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ւ Ւ Յ Ո Ւ Յ Ո Ւ Յ

Տրապիզոնի շրջակայ հայ գիւղերը առհասարակ անտառում ըլլալով՝ բնակիչները լաւ դիրք կարողացան բռնել, այնպէս որ կործաստներն աւելի նիւթական եղան: Տաճիկները քիչ դժւարութեամբ յաջողեցան տըներն այրել և տեղ տեղ ալ սպանել անզէնները: Հըրդէշէած առւները 900-է աւելի են: Աւելորդ է ըսել, մէ ժողովուրդը որքան նեղութիւն կը քաշէր վաշխառուներէն ու կառավարութիւն գրած ծանր հարկերէն: Չատերը կարծեն սիրով կուզէին իրենց վարած գառն կեանկին ու է կերպով վերջ տալ կը չարչարէին ու կը տառապէին, բայց կերեար, թէ յօյն և ընտանեկան սէրն էր զիրենք անպէս երկար ապրեցնողը:

Սուլթանի պէտութիւնը միշտ վատ աչքով կը նայէր արդէն ասոնց վրայ և կը ջանար, որ դպրոցներ ալ չունենան: Կրնա՞ր չատել, երբ գիտէր թէ քաղաքացիք ասոնց հետ իրը եղայր կը վարւէին: Հետևաբար իրեն աւերիչ սիստեմը կը պահանջէր գիւղերն ալ կործանել և դընել այնպիսի վիճակի մը մէջ, որ հայերն ընաւ չի կարողանան այլ ևս իրար օգնել. և որպէս զի այս ամեն նպատակներն առաջ տարւի՝ սուլթանական բռնապետութիւնը զինւեցաւ ամենակեղադար գաւաճանութիւններով, և արդա խութիւնը իր պատնէշը համարեց սամեն պարագայի մէջ՝ ու այնպէս չարութեան սկսաւ:

Հիմայ գիւղացիներուն թէկ մեծ մասը ողջ սակայն իրենցմէ չեն հեռանար սովի, ցուլտի և զանազան տառապանց մահապիթ հարւածներն, որոնք քաղցր մահով պիտի փակեն աչերը ազատութիւնը սիրողին: Կմախիք գարձած քաղաքացին իր օգնութիւններն քանի մ' անդամ չուշացուց, սակայն դարձեալ հրոսակներ հանւեցան կարուեալներու վրայ, որոնք զարնելով՝ եղած չեղածը թալանեցին ըսելով՝ ոկեավարները, վերստին դուք ձեզի կը շտէք:

Զեքանով գիւղը, որ 70 տուն ունէր, 5 բնակարաններէ զատ, մնացած բոլորն ալ կրակի ճարակ եղան: Բնակիչներուն մէծ մասը Ա. Փրկիչը վանքը ապաստանեցաւ, փոքրամասնութիւն մ' ալ գիւղին մէջ զէն ի ձեռին ինքնապաշտպանութեան դիմեց: Պարիան, իր բոլորտիքով 48 տուն, մէծ մասը այրեցաւ ու բոլոր տներն թալանեցան. տեղացիք նոյնպէս վանքը քաշւեցան, անձերնին փրկելու համար: Կոօմիլա 38 տուն ունեցող գիւղի վարի մասի մները չորս հատէ զատ, բոլորն ալ

մոխիր եղան, թալանւեցան. — վերին մասի ապրողները աւելի ամուր տեղեր քաշւելով, իրենք զիրենք պաշտպանեցին, բայց բոլոր տուներնին վառեցաւ. երեք տուն միայն ազատ մնաց: Տերունի. Տէր Յովչաննէս Մավեան քահանան հրացաններով գնդակահար ընելէ վերջ՝ դանակով ալ մարմինը կտոր կտոր ըրին. նոյնպէս Գրիգոր Սարգսեան 90 տարեկան ծերուկը ու անդամացն Յովակիմ Զիրքիարեան 45 տարեկան անձը հրացանով սպանեցին:

Միջէթրիայի բոլոր տներն այրեցան. տեղացիք Ա. Փրկիչ վանքը հաւաքւած էին: Ապիօն և Սէրթէր 60 տնուոր գիւղերէն մէկ քանին միայն բոցերու մատնւեցան. իսկ մարդիկ իրենց տղոցմով անտառներէն իրենք զիրենք քաշութեամբ պաշտպանեցին նախնական զէնքրով:

Սիւրմէնէի 70 տուն հայերը՝ 1500-է աւելի զինւորներէ և լեռնաշրջիկ աւազակներէ պաշարւելով՝ 24 ժամ շարունակ կուեցան և անձնատուր չեղան. վերջապէս տաճիկները յուսահատւած, թողուցին անցան Բաքերդի գիւղերու վրայ: Հոն առանց ինայելու, անզէններուն ամեն վայրենութիւններ ընելէ յետոյ, կրակի ու սուրի մատնեցին մանկալին ու կանայք:

Ա. Փրկիչ վանքը ժողոված էին 350 այր մարդիկ, իրենց լնտանիքներով ասոնք երկու անգամ տաճիկներէն յարձակում կրեցին, բայց չպարտւեցան: Աերջապէս կառավարութիւնը իր միացեալ ոյժերով վրանին քալեց և առաջարկեց անձնատուր ըլլալ: Գիւղացիք տեսան, որ իրենց ոյժէն վեր էր դիմադրել և ռազմամթերք ալ չըկար, ըսին՝ ոեթէ ձեր կրօնքին վրայ կերդնուք ու կը իսոստանաք թէ մեզմէ բնաւ մէկը չպիտի ձերբակալէք, կը թողունք, որ ներս մտնէք: Կառավարութիւնը համակերպեցաւ. ներս մտնելով՝ սկսաւ խուզարկել ասդին, անդին—վանքին աշոտարակին մէկ մասը, որ հնութիւն մըն էր, քանդեց, տաճարին սեղանը կործանեց, ձեղունները քայքայեց և վերջապէս շատ մը կարասիկներ ջարդ ու փշուր ըրաւ: Աերջադարձին վանքին կալածներէն Քէմէնչէճիկին տունը այրեցին, զինքն ալ սպանելով ձեռնունայն հեռացան. հայերն ալ երբ իրենց տեղերը վերադարձան, աւերակներ միայն դտան:

Տիլքանող և Մինասլի գիւղերու տանց մէծ մասը այրեցին և մնացածներն ալ բոլորը թալանեցին. Տէր Մաղաքեա Քահրիմաննեան քահանան, Պօլսու Ալարդաննեան և Յովակիմ Յովսէկիեան սպանեցան:

Բլաթանա աւանին եկեղեցւոյ թաղի հայերն հալածներէ և կողոպուտներէ ստիպւեցան արտասահման անցնել:

Սեպտեմբեր 25-ին Կալանիմայի անցքի մօտ երկու անզէն դիւղացիներ սպանեցան:

Լաղանա 43 տնուոր գիւղացիք անտառներն քաշւելով՝ թէեւ կորուստ չունեցան, բայց տներնին բոլորը այրւեցան և ունեցածնին թալանեցին:

Լաղանա գիւղը՝ Մեղրիկցոց թաղի երկու տներն քանդրով, միւսներն բոլորը աւարի առին:

Կապարօնի բոլոր տներն այրեցան երկու հատէ զատ. տեղացիք նոյնպէս անտառներու չնորհիւ՝ կեանքերնին աղատեցին:

Թարախնի բոլոր տներն մօխիր դարձան. նշանաւոր Հովիւ Սիմառուննեանի բոլոր արջառներն և Մալա գիւղը թողուցած 600 ոչնարներն յափշտակեցին:

Սէրա ձորի արևելեան կողմէ Ծիփրիկա գիւղի 36 տներն հրոյ մատնւեցան: Նոյնպէս ասոր մօտ եղող նէ գիւղը:

Վերանա 85 տնով զուտ հայարնակ և մօտակայ Ալղիդ գիւղերը հրոյ ճարակ դարձան: Թուրքերն ամենէն առաջ Տէր Մաղաքեա Տէրտէրեան քահանան վատութեամբ ձեռք անցնելով՝ սպանեցին: Այն տները, զորս չաւերեցին, արդիւնք են տեղական բէկերու կամ աղաներու շահագիտական զանազան միտուներու:

Այս գիւղացիներ, որ միշտ քաղաք կիջնէին, չէ գիտցած որոշ կերպով՝ թէ որքան կորուստ տած են. հարիւրաւորներ անհետացած են. արդեօք մեռն, պահած են, յայտնի չէ:

Դեռ ուրիշ շատ տեղեր աւելի կամ պակաս աւերումներ կատարւած են՝ զորս թւել շատ երկար կը լար: Զանց կառնենք հոս զետեղել տեղի ունեցած առեւնանդ գութիւններն և տաճիկ կառավարութեան զինւորական և քաղաքական պաշտօնեաններու աներևակայելի լրբութիւնները: Ան ապա հովութիւնը, որ ատեն մը կը տիրեր, շուտով արեան ու կրակի փոխւեցաւ:

Ա՛լ օգնութեան չենք կարօտիր, մահը սիրելի մահը թող միայն մեզ մօտենայ. այն ժամանակ մնաք վարձատրւած կը լանք՝ երբ արշալոյսին մեր որքերը կարենան անոնց Աղատութիւնը երգել:

* *

ԲԱՆՑՈՒԿԵԱԼՆԵՐԸ

Զափազանցութիւն չէ, երբ ըստի թէ սեպտ. 25-ի սուլթանական կամքի կատարումէ վերջ, գրեթէ բոլոր հայերը ձերբակալելով՝ բանտարկւեցան: Ամենն ալ հարցուփորձեցան, ամենախայտառակ միջոցներով: — Պաշտօնեաններու բերաններէն իրը կյանոցէ աղտոտ բառեր դուրս կը թափւէր. երևոյթ մը, որ Տաճկահայաստանի մէջ ապրողն իսկ հազիւ կրնայ երևակայել:

Կոտորածէն 4-5 օր վերջ՝ խուժանը ունենալով իր մէջ ծպտւած ոստիկաններ, կուզէր անզէն բանտարկեալներն ալ ջարդել. բայց ինչպէս որ է կառավարութիւնը առանց զսպողական միջոցներու ետ կեցուց

Ա՛լ երեն միակ փափագը կը ֆանար գտնել յեղափոխականներուն մացցորդ գլխաւորներն: — Ըատերն չարշաւեցաւ: Պաշտօնեանները առանց զսպողական միջոցներու ետ կեցուց

Վերջապէս ճարակած սկսաւ խուժար խուժը արձակել կամ արձակածները կրկին բանտել. մէկ խօսքով, խելակորոյս գազանի մը ամեն կերպերը իւրացուց:

Սուտ ամբաստանագրեր ալ ստեղծեց, որպէս զի անոնցմով՝ կարենայ կործանել մէկ քանի արդարասէր անձինք ալ: Հիմա աներեսաբար ուզած ձեռվը պատրաստւած գրութիւններ կը ներկայացնէ բանտարկեալներուն և կուզէ ճնշմանց տակ ստորագրել տալ: որք սակայն, գրեթէ միշտ կը մերժւին:

Գիշեր ցերեկ անդադար կը հարցուփորձեն, և ամեն հայէ կը պահանջն ըսել երկու տէրորիստ տղայց պահած տեղը կամ թէ յեղափոխականներուն, որոնք լինելու... և ուրիշ այնպիսի ձեռվը քննութիւններ, զորս ամօթ կը համարի գրել:

Ի՞նչ աշխարհ... հիմա բանտին մէջ կը մնան իրաւաբան Յարութիւն Ըահրիկեան, Տօքթէօր Էնշէրեան, մեծահարուսա ծերուկ Հաճի Մարտիրոս Արապեան, Մանուկ և Ստեփան Թաթոսեան Եղբայրներ, դպրոցական պաշտօնեաներ և ուրիշներ մօտ 60 հոգի, որոնց գյութենէն կը կասկածւի...

1895 նոյեմ. 13-ին (Տ. տ.) քաղաքիս տաճիկներն պատրաստեցան այս անգամ յօյներու վրայ յարձակել ասոնք խանութիւն դոցելով՝ Հիւպատոսներուն դիմեցին. — ի՞նչ ընելնին չեն դիտեր: Քանի որ ճիւազ սուլթանը դեռ չէ սատկած քրիստոնէից կեանքը բարակ թելէ մը կախած պիտի ըլլայ:

Ն Ա Մ Ա Կ Պ Ո Լ Ս Ի Ց

Պոլսի մէջ ամեն ուրբաթ լուր կը տարածւի, որ թուրք յեղափոխականները սուլթանը գահընկեց պիտի ընեն, ամեն մարդ անհամբեր փոթորիկի պայթումին կսպասէ ու կսպասէ, ուրիշ ոչինչ երէկ գործը պիտի վերջացնեն եղեր, բայց յորդառատ անձրեխն պատճռով յետաձգւեր է. տեսնենք, Աստած. յաջողութիւն տայ: Թուրք յեղափոխականներու մասին գաղափար կազմելու համար բաւական է, որ գիտնաք, թէ անոնք, ցաւոք սրտի, անկարող են նշն իսկ յայտարարութիւններ կանոնաւորապէս ցրւել մայրաքաղաքիս մէջ. փողցներու մէջ կյատերով ձգած էին, որպէս զի պատահամբ առնեն կարդան:

Ազգասէր պոլսեցիք շատ փափագող են, որ ամեն բան կատարի, միայն իրենցմէ ու և է զոհողութիւն, դրամ կամ աշխատութիւն չպահանջին հայաստանի թշւառներուն համար զգեստ կը պատրաստեն. չեմ յուսար, որ յաջողին, գոնէ մէկ երկու հազար հոգի հագուեցնել, թէև արդէն շատ ուշ մնացած են. մինչեւ ասոնց հասնելը՝ գարունն եկած ու ամեն բան յոյժ տխուր կերպով կրնայ վերջանալ: Պոլսեցին կուզէ արդպիսով իր համբաւը շինել չեն մտածեր երեկք, որ ներկայ բոպէին ոչինչ չարժեր իրենց ըրածը, չեն ըմբռնած, որ հիմա զէնքով պատերազմը միայն օգտակար է հայութեան ու պէտք է բոլոր ուժով անոր նպաստել. Ցաւալի է տեսնել յեղափոխական գործիշ անունը կրողներ ալ, որոնք զգեստ հաւաքելով կզբաղին:

Երբ Պոլսի հասան Զէյթունի ապստամբութեան ու նախնական յաջողութեան լուրերը, ամենքս ալ ուրախացանք, բայց շատ քիչերու միտքէն անցաւ օգնել այդ շարժման՝ թէև բոլորս ալ լաւ կը հասկնայինք անոր կենսական կարեւորութիւնը. Հիմա երբ կսկսի բոթերու ծայրը երևիլ, յուսահատութիւնը կը տիրէ ու լաւ կսկսի: Ստոյդ աղօիրէ կիմանանք, որ դեսպաններու մէջ Զէյթունի ընտանիքներուն օգնելու խորհուրդ կայ. ի՞նչ կը նշանակէ այս, մարդ չգիտեր. ոմանք կը կարծեն, որ Զէյթունն արգէն աւրւած ու կործանւած ըլլալով, մնացած թշւառներուն օգնելու. համար է խորհուրդը:

Պատրիաբքարանի շուրջը օրւան խնդիր եղած է օրացոցին ինդիրը: Պատրիաբքն իսպառ մերժած. էր հրա-

տարակել տալ կրթական նախարարութեան սրբագրած օրացոյցը, ուր ջնջւած էին նԱբդարու թագաւորին մեր ո ց և նՎարդանանց գորավարաց մեր ո ց նման տողերը: Յանկարծ ուրկէ ուր ո. Փրկչի Հիւանդանոցի հոգաբարձութեան գործակալներէն մէկը՝ Գառնիկ Հիւանդարպելյանտեան, իբր թէ այդ հաստատութեան նըպաստ մը ընելու փափագով, տպարանապետ Պաղտատվալեանի հետ կը համաձայնի և հրապարակ կը հանէ նորօրինակ օրացոյց մը, ուր միայն երկուշաբթին, երեքշաբթին իրարու կը յաջորդեն, առանց որ և է տօնսական ժանօմութեան: Պատրիաբքը կը զայրանայ և բացատրութիւն կը պահանջէ. Ա. Փրկչի հոգաբարձութիւն անտեղեակ կը ցուցնէ ինքոնքը. մեղքը կը ծանրանայ՝ խեղճ Գառնիկին վրայ. չգիտենք ինչպէս պիտի վերջանայ այս գործը. պալիարակելի է միայն տեսնել պատրիաբքարանին ենթարկւած վարչական մարմիններու այդ պահարակելի ընթացքը, այս ընդհանուր տագնապի միջոցին: Իրենց այդ ուղղութեամբ՝ այդ պարոնները ստիպմանք պիտի հրակրեն յեղափոխականներու միջամտութիւնը և այդ մանր գործերուն մէջ:

Ազգաբան պատրիաբքի խելքը նոր է գլուխին եկեր, թերեւս Կիլիկիոյ անւանական կաթողիկոս ըլլալուն համար: Հայաստանի ջարդերն անուղղակի կերպով քաջալերելէ վերջ այժմ կուզէ չարիքը դարմանել ու բարձրացնել իր ու կաթողիկութեան անունը հայերուն առջև: Կարմիր Խաչի ընկերութեան դիմում ըրած է, որ օգնեն հայերուն և կըսւի թէ յաջողեր է: Նաև Անդիլոյ դեսպանին խորհուրդ տւած է վեց պետութիւններէն մէկ մէկ ներկայացուցիչ կարգել տալ, որոնք Զէյթուն երթալով՝ պաստամբները հանդարձեցնեն ու թուրքը չէզգացնելով, իրենք թէ Անդիլոյ դեսպանը հաւասներ ու խոստացեր է միւս դեսպաններն ալ համոզել. Խորհուրդնին բարի:

Այսպէս թէ այնպէս ինդիրը մարել կուզէն ու մաս մը հայեր ալ կը նպաստեն այս բանին. ուրիշ ի՞նչ կրնանք ըսել, երբ հայը չուզեր քաջալերել յաղթանակով սկսւած ապստամբութիւնը՝ չուզեր քաջալերել զէնքը ձեռքին անմեղ արիւններու հատուցում պահանջող անձնւերները. հայերու մեծամասնութիւնը վախնալ ու լալ միայն գիտէ, գոնէ, Պոլսի մէջ: Ո՞ւր են այն կատաղի գէմբերը, որ կերեան ուրիշ ազգերու մէջ այսպիսի տագնապալից օրերու մէջ: Հար, մայր, ընտանիք և ունեցած չունեցած կորուսած հայը ինչու այլ ևս կը դանդաղի, կը վարանի անվիչեր նետւիլ մաչու և կեանքի պայքարին մէջ, ուրկէ ժողովուրդներու ապագան կը ծնի...

Կոխը սրբազն է և մեռնողները նահատակ են:

* *

Արիք պէյի ձեռքով սուլթանը Ռուսիոյ կայսեր աղամանդազարդ տուփեր և ուրիշ ընծաներ զրկած է. նՄօնիդէօր Օրեանդալ լրագիրը այս բանը գրելուն համար փակւեցաւ:

Բ Ա Բ Ե Բ Տ Տ Ի Գ Ի Ւ Ղ Ե Բ Ի Ա Խ Ե Բ Ո Ւ Ւ Մ Ը

Որչափ որ սուլթանին այս տարւայ ուղարկած շրջեկ քարոզողներն յաջողած էին յայտնի սուտերու միջոցաւ մոլեռանդ միւսիւլմաններու ուղեղն գրգռել հայոց դէմ ու արդէն լարւած յարաբերութիւններն բոլորովին վատացնել, այսու հանդերձ մեր կողմէն դժւար էր յուսաւ, թէ իսլամական խառն պժեր շլթայւած՝ յանդրդնին աշխարհի առջև բացարձակապէս և անամօթաբար ամեն կերպ չարիք գործել. — դա երեակայել պէտք է:

Հոկտ. 1-էն սկսեալ Տրապիզոնի մօտերէն՝ Խօմուրայի, Սիրմէնէի և Կիւմիշխաննէի շրջակայ գիւղերու տաճիկներէն եկած ահագին բազմութիւն մը, խումբ խումբ բաժանւած սկսան քալել մեր յիւղերու վրայ, բոլորն ալ գրեթէ պետական հրացաններով զինւած: Ասոնց հետ տեղացի ստոր կրօնակիցնին ալ միանալով՝ մոլեգնաբար խուժեցին հայ մշակներու վրայ: Գտածնին աւանց խնայելու գնդակահարելէ վերջ, վիրաւորեալներն ու մեռեալներն կացինով կամ սուրով սկսան կտոր կտոր ընել, հայ հոյանքներու տարափի տակ: Այսքան բարբարոսները չէին բաւեր, վրայ հասան Զէքի փաշային երգնկայէն ղրկած զինւորներուն քանի մը գունդերը որոնք գալով իսկոյն այս ահաւելի անդժութեանց աւելի լայն ծաւալ տիին: Արիւնը սկսաւ առատաբար ոռոգել արտերն ու դաշտերն, այն տեղերն, ուր հայ մշակն շարք մը գարերէ ի վեր կը պետք ու քրտինք կը թափէր սուլթաններու սնուցաններով, ոչ տուն մնաց, ոչ եկեղեցի, ոչ վանք և ոչ այլ ինչ. ամեն ինչ աւերեցին տարամտաբար, շատ մը խաբէութիւններով ձեռք բերած քահանաներն ու երկրագործներն չարաչար սպանեցին, գլուխներն սրերով կտրելով: Ա՛ ի՞նչ ըսեմ, այդ ձերմակ փաթաթած նենգամիտ ու գարշելի գլուխներէն ի՞նչ բան որ դուրս եկաւ, գործադրւեցաւ: Ո՛չ, զդելի արարածներ, զորս աստ պատմել կոպտութեան և մարդկային պարկեշտութեան դէմ լաւանք կը համարիմ:

Վարզահան գիւղն, որ 115 տունէ կը բազկանար, հազիւ 6 մարդ կարողացան կեանկերնին ազատել: Էրկեցիք ունեցած զէնքերնին ձեռք առնելով՝ մեծ քաջութեամբ չորս օր շարունակ կոււեցան: Տաճիկներն երեք անդամ յարձակում գործելով՝ ետ մղւեցան: Չորրորդ անդամին 5000 հոգւոյ ստաւար բազմութիւն մը դարձեալ յարձակեցաւ: Զինւորներու ու խուժանի դէմ կուրծք տող և առաջնորդող Յակոբ Գրիգորեան, Ասկէան Խաչատուրեան, Սահակ Մեքեսեան, Յովակիմ Ռուստա-Սիմօնեան, Առաքել Սիրիասեան և այլ շատ մը կտրիմ երիտասարդներ, կոււեցան արիաբար, մինչև որ սազմամթերքնին հատուցին և ապա ինկան:

Լուսչոնք գիւղի վրայ նախ 200 հրացանաւոր գնացին: 40 հայեր դէմերնին ելնելով, ամուր կերպով զերեսք ետ կը մղնէն պահ մը վերջ թշնամին եռապատկած կրկին կուրգայ: Այս անդամ մերոնք յուսահատ կու մը մղելէ վերջ, տեսան որ ալ մժերքնին հատաւ, տեղի տւին՝ անտառներն քաշելով: թէկ գիւղը ուրիշ տեղաց, պէս գերեզման դարձաւ, ինչպէս և մոտակայ և Լուսաւորիչ վանքն աւերակի փոխւեցաւ:

Պալախօն, Ռուշտիք գիւղերն թէկ ուրիշ մի քանի

գիւղացիներու պէս մահմեդականութիւնը ընդունեցին Ճնշման տակ, սակայն Զէքիի զինւորներն ասոնց ամենը մի հաւաքելով՝ գլուխնին մէկիկ կտրտեցին կացինով:

Պօլուզ, Քասանթա և այլ գիւղեր, որք թէկ պատրաստականութիւնը ունեին գիմադրելու, բայց կառավարութիւնը ու պաշիպողուքներ պատգամաւորներ զիկերով երգւացան, որ եթէ զէնքերնին յանձննեն՝ իրենց բնաւ վաս մը պիտի չըլլայ և կը յաջողին: Սակայն հայերն խարեւէ վերջ, կրակի ու սուրի մատնելով՝ զոհ կերթան խուժանին մոլեգնութեանց ու վայրագ կրբերուն: Շատ խղճակի էր քսանթացի հայուհեաց ինքնասպանութիւններն. ամենը մէկ մէկ դառն մէջոցներու դիմեցին և շատեր մեծ ջրհորներու մէջ ինքզինքնին նետեով՝ խեղդամահ եղան: Ա. Քրիստովիոր մեծ վանքըն աւ աւարի առնելով վերջ՝ եկեղեցին շուտով մզկիթի փոխեցին:

Ո՞ր մէկը կարելի է նշանակել, ամեն հայ իրավութշառաւ, ամեն տան շէմք սրբապղծւած: ու արեամբ ներկւած: Էոլոր գիւղերն կը ներկայացնեն իբր մոխրի կոյտեր, արտերն ու դաշտերն ամայացած, խոտի ու երդի գեղեցիկ դէղերն ալ չեն երեար... Ամեն դի սև սուգ ու տիւրութիւն... մէկ կողմէն կրծնափոխներ գըլխիկը կանցնին՝ արեւուն նայել իսկ ամաչելով, միւս կողմէն ալ բորիկ, մերկ, անօմի թշւառուհիներ իրենց գրկի մանկանց հետ ցեխերու մէջ կը դեգրին:— Մութ է աշխարհն իրենց համար... ցուրտին, քամիին ու կարկուտին հարւածներու տակ կը հեծեն ու կը հառաջէն՝ ողբալով անցեալն ու ներկան:

— Այս ընդհանուր խառնակութեան միջոցին, ամուղղ բարերտի գիւղերու մէջ զոհւածներու թիւը որոշել դժւար է, բայց միջին հաշուով կենթադրուի իբր 2500 հոգի, որոց 100-ին 10 իգական սեռէ են: Իսկ ողջ ու կորած հայուհները շատ կան: Այժմ ով որ աչքի առջև կապրի, խեղճ ու օգնութեան կարօտ է, ի՞նչ ընէ, կրնայ մուրալ զիրենք կողոպտող ու իր սիրելիներն մահացնող գազաններէն: Ո՛չ, ի՞նչ անընական իրականութիւն: Տներն բան մը մնացած չէ. այն ամենը, որ չեն կարողացած տանել, ոչնչացուցած են: Բնակարան չկայ, գրեթէ ամենն ալ այրւած կամ քանդւած, բնաւ պէտքի մը չեն ծառայեր: Ապրողներ կը նախանձին ամենաշատ հակածող անսառունի կեանքին իսկ, ինչու որ զուրկ են ինքնապաշտպանութեան ամեն միջոցներէ:— Չւառ դաշտեցին մինչև հիմա արիւն ու քրտինքի ողջուշով մարմնացուցած, տարւէ տարի միինաներ կուղարկէր սուլթանի սնտուկին: Կթան կով մըն էր, մնուցնող գայլերու ձագերն:— Զգաց իր ողղորմի լինելը և իր կուրծքին մէջ ծնած ապստամբական ոգին դեռ քայլ կառնէր— վրայ հասաւ իր կեղերիցը առաջ զէնքը թշնամիին ձեռքն էր, իրենց քածին կը մնար լոկ մահ:— Նոր հասկացած էին՝ թէ ասանկ բարբարոս երկիր մը մէջ, իրենց դաւանած աւետարանը զէնքով միայն կապրի...

Ինչ որ է— մեռնողը միշտ բռնութիւնն է, արիւնը մէջ չպականեցներ:

Ահա շարք մը աւերակ գիւղեր, որք լիրը Սուլթան Համբակին թագաւորութեան արդար կնիքը կը կրեն...

ՏԻՒԴԵՐԻ ԱՆԹԱՆԱՅԻՆ ԽԵՐԻ						ՏԻՒԴԵՐԻ ԱՆԹԱՆԱՅԻՆ ԽԵՐԻ					
ՏԻՒԴԵՐԻ		ՀԿԵԴԵՐԻ		ՀԿԵԴԵՐԻ		ՏԻՒԴԵՐԻ		ՀԿԵԴԵՐԻ		ՀԿԵԴԵՐԻ	
ՏԻՒԴԵՐԻ	ՀԿԵԴԵՐԻ	ՀԿԵԴԵՐԻ	ՏԻՒԴԵՐԻ	ՀԿԵԴԵՐԻ	ՏԻՒԴԵՐԻ	ՏԻՒԴԵՐԻ	ՀԿԵԴԵՐԻ	ՀԿԵԴԵՐԻ	ՏԻՒԴԵՐԻ	ՀԿԵԴԵՐԻ	ՏԻՒԴԵՐԻ
56	2	60	1300	100	20	250	25	500	40	”	”
200	2	150	1750	600	50	800	45	300	60	”	”
90	2	80	1500	200	40	400	30	270	30	”	”
Լուսաշոնք	2	75	2250	400	20	500	40	500	40	”	”
Քարաւերակ	2	125	1250	600	30	300	60	300	60	”	”
Բլութուկ	1	40	1050	375	20	270	30	140	20	”	”
Առւշտոի	1	25	200	100	10	140	25	160	25	”	”
Ս. Թողոս	1	40	870	140	8	160	25	”	”	”	”
Օձգեղ	1	20	400	170	5	70	15	”	”	”	”
Վերի Քրդի	30	1	20	350	120	5	70	15	”	”	”
Վարի Քրդի	20	—	12	270	80	3	54	10	”	”	”
Քոհման	37	1	33	300	190	8	80	20	”	”	”
Կիւ	50	1	36	250	175	—	100	12	”	”	”
Փողերիան	15	1	13	140	75	3	80	8	”	”	”
Վարդաշանք	115	2	55	275	300	5	320	30	”	”	”
Խայէկ	50	2	45	450	275	10	395	30	”	”	”
Մալանաս	60	1	35	1200	500	10	400	15	”	”	”
Էլլերէկ իամ	82	2	65	800	300	10	300	17	”	”	”
Ուրուժիշ	30	1	24	700	200	5	300	8	”	”	”
Ալմակա	20	1	20	150	175	3	200	5	”	”	”
Կիւ	43	1	45	1250	300	—	400	10	”	”	”
2աշմանց	55	1	35	1000	400	5	400	10	”	”	”
Խօփուղ.	80	1	60	1300	300	—	600	35	”	”	”
Արիւծիա	30	1	30	400	190	—	500	20	”	”	”
Հինաւ	63	2	65	650	350	—	150	30	”	”	”
Բլուր	112	1	70	1250	420	—	130	40	”	”	”
Մարճանչ	10	1	13	350	85	—	80	10	”	”	”
Կընճաւերակ	12	—	10	270	80	—	60	10	”	”	”
Քիսախիմ	5	—	6	180	60	—	40	3	”	”	”
Սլոճի	30	1	22	400	170	3	85	15	”	”	”
	30	1760	36	1329	22507	7430	273	7334	643000		

Ա Յ Ն Թ Ա Պ Ի Ց

Այնթապի դեպքի մասին հետեւեալ դպջն տեղեկութիւններն առնւած են: Կոտորածն սկսած է նոյեմ. 16 (Հ. տ.) առաւտեան և տեած է երեք օր շարունակ. սպանւածներուն թիւն է 3-400 կամ ըստ ոմանց 800-1000, և նոյնչափ վիրաւորեալ այրւած են 300-400 տներ մեծ մասամբ աղքատներու, բոլոր շուկան կողոպտւած է. մերկութիւնն և անօթութիւնը՝ մի խօսքով խեղձութիւնն աննկարագրելի է. պաշտպանւած են մասամբ մը այն տները, որոնք թաղային մեծ դոներ ունին. ողջ մացած բոլոր աչքի զարնող անձնաւորութիւնները բանտարկւած և խիստ հսկողութեան ենթարկւած են. յարաբերութիւնները խզած են, ոչ միայն դրսի, այլ և նոյն իսկ դրկից տներու հետ. թըքերէն ունալք խոճահարւելով այսպիսի զարհուրելի կոտորածի մը ագդեցութենէն և կամ ուրիշ հաշիւներէ առաջնորդւելով՝ աշխատած են մասամբ մը առջևն առնել, բայց չեն յաջողած:

Վ Ա Ն Ի Ց

Մենք հոս չենք կրնար տունէն դուրս ելնել, եթէ համարձակինք, անմիջական վտանգը պատրաստ է. Հրմա հարուստ ու աղքատ մէկ են, բոլոր արմտիքնիս ոչնչացաւ. մեր նախնիքներու տնկած ծառաստանները այսօրւայ համար էին—ապրուստ չունենալով ծառերու կանաչները կուտենք և կտրտելով թաց թաց կը վառենք: Գիշերով երեք եղբայրներ տարին կարապետին փողոցին մէջ կախեցին. պատճառը հարցնողներուն կը պատասխանէին՝ թէ „Հայտէ կեավուրներ, մեր թագաւորին հրամանն այս է, պէտք է կատարենք, որ արքայութիւն երթանք“: Գիշեր ատեն Սճեան Յարութիւնին տունը կողոպտեցին ու զինքն ալ սպանեցին: Խեղձին քոյրը հէտ Սաթինիկը բռնութեամբ քաշեցին տարին, ուր, սակայն չենք դիտեր:

Ք է Մ Ա Խ ի Թ Ա Վ Կ Ն Ե Բ Գ Ի Ւ Ղ Ի Ց

Մենք ամեն վայրկեան մեռեալներուն կըսենք, որ դուք ելք գերեզմաններէն մենք պառկենք, այնքան անտանելի դարձած է մեր կացութիւնը: Մեր քաշածները աննկարագրելի են, արիւն արցունքը միայն կարգութելով: Քիշերով առնել Սճեան Յարութիւնը անդամութեամբ կերպելու, պարծենալու նրանցով ու նրանց արած գործով, նրանք ամենակեղտու ու լիբր կերպով հայշոյւում են: Ի՞նչ անուն տալ նրանց... յետ գարճնել արտասանած խօսքերը, քիչ է, ուստի և թողնում, ենք ժողովրդի դատաստանին:

Երեսի վրայ ձգելով անպաշտպան կիներն ու մանուկները Միւս բոլոր հայ գիւղերն ալ նոյն վիճակն ունեցան. բոլոր թաղնեցան, ոչ անկողին և ոչ հագուստ մասց այս բոլորը կատարւեցան օր ցերեկով, կառավարական պաշտօնեաներու աչքին առջև:

Ինչպէս մեզ գրում են, մի ինչ որ պարոն, կամ ինչպէս նամակագիրն է անւանում՝ մի „արտիստ“, մի բանախօսութեան ժամանակ յանդգնել է Բահրի և Փէրիդ փաշաների վիրաւորող դաշնակցական աշաբեկիներին անւանել որպիս բուն նշանակութեամբ որի կայ: Սրիկայ են անւանուում այն հերոսները, ժողովրդի այն քաջ զաւակները, որոնք, արհամարհելով ամեն վտանգ, տանջանք, սարսափ ու մահ, հերոսաբար, օրը ցերեկով, ձակատ առ ձակատ գնդակ են, արձակում՝ պատժելու սուլթանի բարձր պաշտօնեաներին, հայ ժողովրդին այնքան չարչարանքներ ու տանջանքներ պատճառողին, երիտասարդ կեանքեր բանտերում մաշեցնողին ու մահացնողին, գիւղեր ու աւաններ աւերողին, որը եւր այդ աւերող թաթը հասցրել էր մինչեւ Պարսկական սահմանները, մոել էր Դերեկ ու Սալմաստի հայաբնակ գիւղերը, և վերջապէս որը, երիտասարդ Մանուկ Ըատորեանին կախաղան հանեց, յեղափոխականներին սարսափեցնելու համար: Այսպիսի մի հրէշին պատժողներին „սրի կ այ“ են անւանում: Սրիկայ են անւանում ժողովրդի այն հերոս զաւակներին, որոնցով միայն կարելի է ոգեկորւել և նրանց անձնագոհնութեան ու կատարած գործի առջև գլուխ խոնարհնել: Գործ, որ իւր տեսակում եզական է մեր յեղափոխական կեանքի մէջ: Առաջի անգամն է, որ մի հայ և այն էլ դարերով ստրկացած հայը յանդգնութիւն է, ունենում փաշաների վրայ գնդակ արձակել՝ մահով պատժել: Եւ փոխանակ այսպիսի անձնագոհներին ակնածութեամբ վերաբերելու, պարծենալու նրանցով ու նրանց արած գործով, նրանք ամենակեղտու ուստի և թողնում, ենք ժողովրդի դատաստանին:

Մեզ կը մնայ ցաւել, որ այս արտասուժի և արեան րոպէում ստիպւում ենք անձնազոհների պատիւ պաշտպաննել, թէկ նրանց հայշողներին արհամարհելու անգամ պատիւ է, բայց այդ մենք արինք, որովհետև այդ խօսքերը ծափահարել է „ուստանողներից“, որոնց մեզ կը մնայ միայն խղճալ...

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպւած ենք մեր նոր հասցեն դարձնել „ԱՐՄԵՆ-ԳԱԼՈՎԱՐ“ որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն:

Խմբագրութեան հետ թղթակցողներից խնդրուու է բացառապէս պէտք ու դիմել այդ նոր հասցեով:

Դաշնակցութեան անձնաօթներից խնդրուու է թղթակցութեան ու սիրաւութեան համար դիմել:

Armene-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վկիննա, Դաշնակցութեան ազատ տպարան:

ՅՈՇԱՀԿ

Հ. Զ. Բ. ԲԻԲՐԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. LIBRARY

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՎԱՑՈՒԹԵԱՅ ՕՐԳԱՆ

ՑԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայկական հարցը դիմումատիական տեսակէտից կարծէք մտել է իւր քարացման շրջանի մէջ. մի քանի ամս առաջ այդ յուղով ու երկիւղ պատճառով խընդիրը այսօր կարծէք մոռացութեան է տւած, ոչ ձայն, ոչ ծպտում։ Հայկական հարցը, որ ամբողջ աշխարհը մի քանի անգամ դղոգացրել է, որ հարիւր հազար զոհ է արել ուղում են թաղել այդ երբէք չե յաջողութել թաղել Հայկական հարցը, այդ կը նշանակէ թաղել հայ ժողովուրդը և որն է այն գերբնական ոյժը, որ իւր հարւածով կարող է մեռցնել կենսականութիւնով իմ հայ ժողովուրդը։

Մենք շատ լաւ դիմենք, որ այդպիսի գիտումներ կան. այս դիպւածում մենք չենք խօսիլ սուլթանի կառավարութեան մասին, այդ աւելի քան պարզ է։ Բայց մենք մատնացոյց կը լինենք սուլթանի կառավարութեան ընկերակցի լրայ, որը հայ ժողովուրդի վերաբերմաք նոյն քաղաքականութիւնն ունի, ինչ որ հիքը՝ սուլթանը տարրերութիւնը միայն կայանում է միջոցների աւելի կամ պակաս բիրդ լինելուն մէջ. այդ ցարի կառավարութիւնն է։

Ցարի կառավարութեան քաղաքական դիմումներն ու ձգտումները յայտնի են. Պետերբուրգը վաղուց իւր աչքը յառել է Պոլսի վրայ և իւր այդ նպատակին հասնելու համար, նա միշտ օգտւել է սուլթանի կառավարութեան վայրենի բարբարութիւնից՝ քայքայելու. Օսմանեան պետութիւնը՝ Ռօմանովների գահը բարձրացնելու նրա աւերակների վրայ, սկահուն ու քրիստոնեայ ժողովուրդների պաշտպանութիւնը պատրւակ բռնելով. ուրիշ խօսքով, ցարի կառավարութիւնը իւր քաղաքական նպատակների համար՝ Բիւզանդիոնի համաշխարհային պետութիւն դառնալու և ամբողջ աշխարհին ակնուտով (մտրակով). կառավարելու համար, կեղեքում է ու քաղաքակրթեած մարդկութեան։ ազգայնութեան և կրօնի հասկացողութիւնները, ծառայեցնելով նրանց իրեւ զէնք, իրեւ միջոց; եւ ցարի կառավարու-

թիւնը երբէք զանց չէ առել ոչ մի դէպք իւր այդ ցնորամիտ նպատակին հասնելու համար։ Միւս կողմից Եւրոպական միւս պետութիւնները միշտ արգելք են եղել ցարի կառավարութեան այդ ոտնաձգութիւններին, մասնաւորապէս Անգլիան, ներկայ նուսիայի քաղաքականութեան երգւածական պահպանութեան պահպանութիւնը ունեցող քաղաքական ոյժերի հաւասարակշռութիւնը անկարող լինելով ընդհանուր համաձայնութիւն կայացնել ոկնուտի կառավարութեան։ կնուտով գասեր տալ: Դեռ այս բաւական չէ, մենք տեսնում ենք, որ մի քանի պետութիւններ նրա բարեկամութիւնն են փնտում, մենք այսօր հանդիսատես ենք այն տեսակ քաղաքական կօմբինացիաների որոնք կարող են միայն ամօթունախատինք բերել Եւրոպային, մանաւանդ 1789 թ. 1793 թ. 21 յունարի, 1848 թ. 1870-71 թ. Գրանսիային, որին է պարտական իւր ներկայ դիպլոմատիական յաջողութիւններով ցարի կառավարութիւնը: Բայց թողնենք պատմական այդ գառն երևոյթը, այլապէս նա մեզ հեռու կը տանի, և գառնակը մեր ինդրին։

Օսմանեան պետութեան պատմական ոխերիմ թշնամին այժմ նրա բարեկամ ու հովանաւորողն է, և, մինչև իսկ, հայկական սարսափի մէջ, նրա խոսւուղը: Պատճառները հասկանալի են: Չնայած որ ցարի կառավարութիւնը այժմ դիպլոմատիական տեսակետով աւելի յաջող պայմանների մէջ է գտնում քան մի որ և է եւրոպական կառավարութիւն, բայց և այնպէս նա ոչ մի հարաւորութիւն չունի ներկայումս օգտելու հայկական ոխառնակութիւններից։ Ներքին մի քանի խնդիրներ, ֆինանսական վիճակը, ծայրագոյն արեւելքում տեղի ունեցող քաղաքական դէպքերը, նրանից պահանջում են սպառնացող տակտիկայ ըբունել։ սուլթանի կառավարութեան վերաբերմաք: Բայց մինչդեռ հայկական խնդիրը լուրջ բնաւորութիւն է առել շնորհիւ յեղափոխական շարժումների և այսօր միջազգային քաղաքական խնդիր է, քանի որ եւրոպական 6 պետութիւնները միջամտում են այդ հարցում. և, եթէ այսպէս շարունակի, նա կարող է ցարի կառավարութեան շահերը վտանգի է ենթարկել, կարող է Տաճկահայաստանից բարձրանալ այնպիսի մի պատնէշ, ինչպիսին եղաւ Բալկանեան թերակղզու վրայ, և եթէ խնդիրը այդ բնաւորութիւնն ստացաւ, պատերազմի վտանգ է

առաջ գալիս, մի բան, որ ներկայումս բոլորովին ցանկալի չէ ոչ միայն Ռուսիային, այլև Անգլիային, ինչպէս և ամրող Եւրոպային: Այս մասին խօսած լինելով հարկ չենք համարում վերադառնալ նրան: Այսպէս լինելուց յետոյ, համեմանմի է, որ Ռուսիան պիտի աշխատի ոչնչացնել այդ ծրագրի պատճեշի իրականացումը արգելքներ հանելով և ահա նա դիմում է իւր տրամադրութեան տակ ունեցած միջոցներին:—

Հենց սկզբից, երբ նա Անգլիայի առաջարկութեամբ Փրանսիայի հետ միասին ձեռք առին Հայկական լիընդիրը, հենց սկզբից նա միշտ երկդիմի, նենդամիտ դիրք բռնեց և ամեն կերպ աշխատում էր հարցը ի վեաս հայ ժողովրդի լուծելի: Եւ իւր այդ նպատակի համար, նա ամենակեղդու, ամենաստոր մանեօվը անում Բօսֆօրի ափերում ու Ելդիզի պալատում: Հենց այն ժամանակ, երբ Տաճկահայաստանի կոտորածը իւր ամենաբարձր կէտին է համում, որ կարող էր առաջացնել ամենալարւած վտանգաւոր քաղաքական դրութիւն՝ եթէ դիպլօմատիան ամբողջ ուշադրութիւնը այդ կէտի վրայ յառած լինէր, ահա նա մի ճարպիկ խաղով կարողանում է դիպլօմատիայի ուշադրութիւնը հեռացնել սպանդանոց դարձած դժբախտ երկրից, նըրան զքաղեցնելով երկրորդ պահականաւի խնդրով: Եւ այս ոչ միայն երկրորդական, այլև սկզբնական հարցի հետ ոչ մի կապ չունեցող պահականաւի խնդիրը նրան յաջողւում է ամսից աւելի ձգձգել, մինչև որ դահիճը իւր զոհերի հետ հաշեւը կը վերջացնէր, մինչև որ Տաճկահայաստանի հայ ժողովուրդը իւր ապագայ այդ խոչընդոտը կը հարթէր: Այդ նրան յաջողւեց Ռուսական դիպլօմատիան լաւ, յաջմութիւն տարաւ, նա կարողացաւ վարագուրել հարիւր հազար մարդկային զոհերը, աւերակ դարձած երկիրը:

Պահականաւի խնդրում Ռուսիայի ներկայ դիպլօմատիան երեսում է իւր ամբողջ կեղդուութիւնով երեսում է Բիսմարկեան քաղաքականութեան հետեւելու մէջ, որ մարդկային չէ, այլ գազանային, որի համար նպատակը սրբում է միջոցը: Ռուսական դիպլօմատիան բարձրացնում է երկրորդ պահականաւի խնդիրը, նոյն դիպլօմատիական վարագոյրի յետեկից հարեմի լակուտին խրախուսում է ընդդիմադրելու: Նոյն դիպլօմատիան կուրացնելու, խարելու համար քաղաքակրթւած աշխարհը, ինքը առանց արեան բժի մնալու, այն աստիճանին է հասցնում իւր ստորութիւնը, միայն եթէ նպատակին հասնի, որ նոյն իսկ իրենց վեհապետին են խառնում այդպիսի մի խնդրում: և ցարը միջամտում է այնպիսի մի ժամանակ, երբ դրանից մի քանի շաբաթ առաջ նրա գահակիցը՝ սուլթանը նամակով դիմէլ էր մի սոսկ մինիստրի և խնդրել, որ իւր և իւր երկրի համար ճառ խօսի: Ռուսական դիպլօմատիան այն աստիճանի լրբութեան է համել, որ մինչև իսկ չի քաշւում ստո-

րանալուց: Բայց 19-րդ դարու վերջին դիպլօմատիան թքել է բոլոր այն յատկութիւնների ու արժանաւութիւնների վրայ, որոնք մարդկային են և դեկապարում են պետական շահերով:

Մենք չենք կարծում, որ Եւրոպական դիպլօմատիային յայտնի չլինէր Ռուսիայի այս ստոր խաղը. բայց եթէ մինչև իսկ Ելդիզի հարեւմային ու ճահճային մթնոլորդում դժւար էր այդ տեսնել, նրանք կարող էին նըկատել գաւառներում, կոտորածի ժամանակ, թէ ինչ դիրք էին բռնել և ինչպէս էին վերաբերում կոտորածին: ցարի կառավարութեան ներկայացուցիչները՝ հիւպատոսները:

Որ Տաճկահայաստանում տեղի ունեցած կոտորածը եղել է ցարի կառավարութեան հաւանութեամբ և աջակցութեամբ, դորանում ոչ մի կասկած չկայ, փաստերը կրենք են խօսում: Սուլթանի կառավարութիւնը չէր համարձակիլ այդպիսի յանդգնութեամբ իւր ծրագիրը ի կատար ածել եթէ նա խրախուսող չունենար և այդ խրախուսողը կարող էր լինել միայն ցարի կառավարութիւնը:

Այս հաստատելու համար մենք ունինք շատ փաստեր, որոնցից յիշենք մի քանիսը. Տրապիզոնի ռուս հիւպատոսը կոպտաբար մերժեց կոտորածի ժամանակ իւր հավանաւորութեան տակ առնել ապաստան խնդրով տաճկահամատակ հայերին, ասելով՝ „դուք արժանի էք“: Կարինում կոտորածը սկսում է ուսւ հիւպատոսի Ծաքիր փաշայի մօտից դուրս գալուց միայն մի քանի բոպէ յետոյ.. իսկ մինչ այդ, նոյն հիւպատոսը գիշերները միշտ Ծաքիրի հետ էր անցկացնում: Իսկ վանի հիւպատոսը ամենամիջը կերպով յայտնում է՝ „եթէ մեր պետութեան մէջ հայերը այդպէս ապստամբւեին, մենք աւելի խիստ կը վարւէինք“: Բաւարար չե՞ն սրանք, չե՞ն հաստատում՝ որ սուլթանի կառավարութիւնը խրախուսել և մինչև իսկ աջակցւել է Եւ գեռ բաւական չէ այդ բաւական չէ, որ նա ունեցել է մեծ բաժին այդ սարսպներում, բաւական չէ, որ նա ճարպիկ մանեօվը յով յաջողեցրեց վարագուրել կոտորածը, նա ամենամօթ կերպով յանցանքը ձգում է հայերի վրայ ու վերջններիս է դատապարտում Կ. Պոլսի դեսպանի անխիղճ հեռագիրը հայոց կաթողիկոսին և նրան արած դիմումները ու գործ գրած Ճնշումները պատրիարքի վրայ, աչք ծակող փաստեր են՝ հաստատելու ցարի կառավարութեան գործած անամօթութիւնները: Եթէ սրանք էլ բաւական չեն, մենք ի նկատի կունենանք Հայկական հարցի միջազգային բնաւորութիւնը մի կողմից, իսկ միւս կողմից, որ հայկական տարրը ուսւաց կառավարութեան համար ոչ համելիս մի տարր չէ՝ իմրեւ ոչ լուծեւող և ընդդիմադրող: Եւ քանի որ անուղղակի ճանամկարչով նա կարող է իւր նպատակին հասնել և այն էլ ուրիշի միջոցով ինչո՞նու չանչուում ու-

րիշի ձեռքով՝ կրակից շագանակներ չհանել...

Այդ բոլորից յետոյ, նա սպիտակ-տէրօր է սկսում իւր պետութեան մէջ հայերի վերաբերմամբ, և մինչև իւր ճնշող թաթը մեկնում Պարսկաստան՝ նա սկսում է ամենախիստ կերպով հետեւ յեղափոխական շարժման և իւր բանտերը լցնել հայ երիտասարդներով, որոնց մեղքը նրանումն է կայանում, որ ինտէլիգէնսու են: 8արի կառավարութիւնը ձեռք տւած սուլթանի կառավարութեան՝ Հայկական Յեղափոխական շարժումը խեղդել է ձգտում: Նա այս տակտիկայով ուզում է երկու նպատակի հասնել՝ թէ ջլատել յեղափոխական շարժումը և իր դէմ գրգռելով հայ ժողովորդը, նրա ուշադրութիւնը հեռացնի Տաճկահայաստանից և թէ առիթ ունենայ աւելի խիստ վարւելու ուուսահայերի հետ: 8արի կառավարութիւնը աժան-պրօվոկատորի (agent provocateur դրդէ-դործակալի) դեր է կատարում: Բայց այսօրւայ պրօվօկատորին կարող ենք հաւատացնել, որ հայ յեղափոխականներին գիտեն՝ թէ իրենց դերը ու կոչումը, թէ իրենց ոյժը, և թէ լաւ են ձանաչում իրենց թշնամիներին. ոչ մի պրօվօկացիա չի կարող իւր նպատակին հասնել չի կարող հայ յեղափոխականներին դուրս բերել իր ներկայ գործունէութեան սահմաններից. թէ բանտարկութիւնները, թէ խստութիւնները, թէ անմիտ ու տղայական խուզարկութիւնները ևայլն, կարժանանան արհամարհանքի և սառն վերաբերման:

Մատնացոյց լինելով ցարի կառավարութեան բռնած դիրքի վրայ, ցայց տալով, որ նա այժմ պրօվօկատորի դեր է կատարում, մենք յայտարարում ենք կրկնելով որ նրան երբէք չի յաջողութիւն հայ յեղափոխականներին դուրս բերել իրենց գործունէութեան սահմաններից, չի կարող նրանց ջլատել ու գործունէութեան մէջ բաժանումներ առաջ բերել. որքան էլ նա, ցարի կառավարութիւնը վստահ լինի իւր Փիզիքական ոյժի վրայ, բայց և այնպէս հայ յեղափոխականը հաստատ կը մայ իւր կոչմանը և կը շարունակի կոիւր:

Թող ինչ ուզում են անեն, թող երոպական դիպլոմատիան խաղալիք դառնայ ցար-սուլթանական դիպլոմատիայի ձեռքին, թող կոտորեն, բայց և այնպէս հայ ժողովորդը հաւատարիմ կը մայ Ազատութեան դրօշակին, բայց և այնպէս, հայ ժողովորդը, շուտ թէ ուշ կը հանի իւր նպատակին—կը կանգնի սուլթանական կառավարութեան դիակի վրայ: Ապագան հայ ժողովը դիմն է:

Հայութ

ԶԵՅԹՈՒԻՆԻ ԱՊԱՍՏԱՄԲՈՒԹԻՒՆՆ

ՆԻՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹՈՒԹՅՈՒՆ

Գուանսիական Tempus թերթը հաղորդում է.— Հաստատում են, որ տաճկական զօրքը ԶԵՅԹՈՒՆԻ առջև մի փառաւոր պարտութիւն է կրել: Մարաշի բողոքական եկեղեցիները լիբն են վիրաւորւած զինուորներով, որոնց խամարում են միսիոնարները:

Հաղորդում են, որպէս թէ 5-600 հոգուց բաղկացած հայկական երկու գունդ, որոնք ապստամբներին օգնելու էին գնում, ԶԵՅԹՈՒՆՐ պաշարող կանոնաւոր զօրքի կողմից մեծ նեղութիւն են կրել:

* *

Ըստ Հաւասի գործակալութեան, պատերազմական միսիոնը նկատելով, որ հիւպատոսական միջնորդութիւնը որ և է հետեւանք չպիտի ունենայ, հրամայել է կեսարիայի վրայով 1000 մարդ ուղարկելի ԶԵՅԹՈՒՆՐ հիւսիւսային կողմից պաշարելու համար:

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱ-ՏԱՀԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽՑ

II

Անշուշտ լրացուցիչ տեղեկութիւններ կուզէք ստանալ քաջարի հայրուկային խմբի մասին, որը սահմանագլխից սկսած մինչև Հաջի-Ղշաղ գիւղը՝ չորս օր ու գիշեր անընդհատ կորովի կոփւ մղելուց յետոյ անհամեմատ անհաւասար ոյժի դէմ, զէսքի ոյժով ձեղքեց Համբերի գնդերից կազմված շղթան և մտաւ երկրի խորքերը: Այս անգամ պիտի լրեմ այդ մասին, որպէսին պակասում են ճիշտ տեղեկութիւններ:

Ինչքան ոգևորեցնող է հայ ժողովների համար հերոսական մի այդպիսի կոփւ մղած մի բուռն քաջերի կողմից ահագին բազմութեան դէմ, նոյնքան էլ սարսափեցնող էր այդ մանաւանդ քիւրդ ցեղերի համար:

Համբերի գնդերը ցեղապեսների առաջնորդութեամբ իրենց թոյնը թափեցին գիւղացի հայերի վրայ: Ամրոջ Վասպուրականը դարձաւ սպանութեան, թալանի և սոսկալի չարագործութիւնների ասպարէզ: Սուլթանի հայերի նկատմամբ հրամանագրաւած ջնջելու ծրագիրը՝ սկսեց գործադրուել ամենայն ճշուութեամբ: Հայերի ստացւածքը, տան կարասիքը նախիրը, ամբողջովին դարձաւ քրդերի սեպհականութիւն: բազմաթիւ գիւղեր այրեցնան, դարձան աւերակ և բնակիչներից նրանք, որոնք կարողացնան ազատել իրենց գլուխը, թողին ամեն բան և ապաստան գտան վանում կամ գայմագամանիստ որ և է քաղաքում, ինչպէս Բաշկալէ, Արձակ և այլն: Իսկ քրդերը հայերից բերած թալանը ազատ համարձակ ծախում են Խոյ և Սալմաստ գա-

ւառներում: Մարզկցիների ցեղապետ Հարավը որը անցեալ սարի 500 հոգով յարձակւեց Դերիկի վրայ և ամօթապարտ յետ դարձաւ, այս սարի ևս իր մօտ 400 մարդկանցով, նախապէս թալանելով և աւերակ դարձնելով հայաբնակ Բոնաւրիկ գիւղը, յարձակւեց Կօթուրի վրայ, որը սահմանադլմի վրայ Պարսից բերդն է համարւում: Հայերը և պարսիկները միացած ամրանում են բերդում, վճռելով մինչև վերջին շունչը դժմարդել Հարավի ոյժին: 9 ժամ կուի մղելուց յետոյ, Հարավը երեք դիակ թողնելով՝ ստիպւած է լինում գլխակոր յետ քաշւել, որովհետև պարսիկ խանը զենում է հայերին կառավարական հրացաններով և գործի է բերդում թնդանօթներն անգամ: Հայերից թեթև կերպով վիրաւորւում է կօթուրցի Գրիգորը: Այսուհետեւ Պարսից կառավարութիւնը ամրացրեց իր սահմանները զորքերով, որպէս զի կարողանայ քրդական արշաւանքների առաջն առնել որը, պէտք է ասած, շատ հաւանական է համարւում:

Սուլթանի կառավարութիւնը չըբաւականանալով հրոսականմբեր ուղարկելով իր հարեւն կառավարութեան սահմանները, նա աշխատում է Պարսկաստանում լարել մի գիւային մեքենայութիւն, որը, մենք լիսայոս ենք, կը ցնդի օդի մէջ: Իր հիւպատունների և վարձկան գործական միականքների միջոցով նա՝ հարձերի սպասաւորը, ձըգտում է խլրում, ընդհարում առաջ բերել պարսիկների և հայերի մէջ գրգռելով առաջնների փանատիկոսութիւնը: Քանից փորձեր եղան, մարդիկ վարձւեցն առի առիթ լինելու մի այդպիսի ընդհարման, սպանելով այս կամ այն մօլլային կամ չելին, բայց այդ գաղտնի դաւերը բոլորը բայցւեցան...

* *

Նամակիս հետ կցում եմ Աղքակի աւերած գիւղերի և սպանութիւնների նկարագիրը: Պէտք է ասել: որ Աղքակում խժժութիւններ գործող վերև յիշած մարզկցիների ցեղապետ Հարավն է, որը ահա քանի տարի է տաճիկ կառավարութեան կողմից արտօնութիւն է ստացել ընաջին անելու Աղքակի հայերին: Քրդերը յարձակւում են Սօրան գիւղի վրայ, գնդակահար անում Յարութիւն անունով երիտասարդին և քշում 300 ոչխարը: Նոյն վիճակին են ենթարկւում Քերդակ, Լաշաթ և Բաշ-Գիւղ գիւղերը: Այդ գիւղերում սպանում են 4 հոգի և եղիսաբէթ անունով մի կին իր հարսի հետ:

Աերջն գիւղում 6 կանայք օրը ցերեկով գիւղի փողոցներում բռնաբարւում են քրդերից.

Քշում են Առակ գիւղի ոչխարի հօտը, Խաչատուր անունով հային վիրաւորում իր եղբօր հետ, իսկ Աստւածատուր անունով հայի գիւղը մինչև այժմ կառավարութիւնը իրաւում է տալիս վերցնելու:

Աւերակ են դարձնում, այրում Պատկան, Մալքաւա, Սօրադեր, Չուխ, Հերեսան, Առակ և Աղքակի գրեթէ բոլոր գիւղերը: Սոսկալի սպանութիւններ, առնանգում ներ են տեղի ունեցել գրեթէ բոլոր գիւղերում: Գիւղացին թողած իրենց գիւղը, տունը, ամեն բան՝ անօթի, մերկ, կենարոնացնել են, բաշկալենում և ապրում են մուրացիանութեամբ...

ԲԱՍԵՆԻ ԳԻՒՂԵՐԻ Ա.Ի.Ե.ԲՈՒՄԸ

II

Դէլի-Պապայի անվեհեր կուից յետոյ, երբ քրուց վայրենի և սովալլուկ բազմութիւնն կորագլուխ յետու վերադարձաւ, թէ թուրք, թէ քուրդ ամբոխի և թէ տաճիկ կառավարութեան համար մի անտանելի ցաւ, մի անբուժելի վէրք դարձաւ, որ մի հայ գիւղ պաշտպանել է և բնակչաց կեանքն ու պատիւը պահպանել: Պատաղը քիւրդ ցեղի ցեղապետը Զըպէթ անուն, ուկտիւնով իւր Մուհամեդի անւան վրայ, հոկտ. 29-ին գալով Տօդի հայաբնակ (բայց այժմ աւերակ) գիւղը կսկսին մացած դոները քանդել, հրդեհել, կոտորել վերջապէս բռնութիւն, աւերած ու սրերի շոշալիւնը միայն կը տեսնեւը, իսկ հայ—ոչ երբէք: Դէլի-Պապայի երիտասարդները, իրենց գիւղի շրջակայքը ամրացնելով, կսպասէին այն բոպէին, որ բաղդը պիտի որոշէր ապագան ու պատիւը: Ահա քը դաշ կողմից լը ապագան գիւղ գիւղ գիւղեած համբար աղա անուն ազնիւ հայի քով, յիշեալ քիւրդ ցեղապետի կողմից կը բարեկ և կը հրամայէ անձնատուր լինել, բայց Համբար աղան պատասխանելով կը բաւէ: Ոթէն մենք, արեան, կապուտ կողոպպուտի ծարակի չենք, բայց եթէն նա գալիս է, մենք պատրաստ ենք ամեն կերպ, մինչև վերջին շունչ դիմադրել, մեռնել և ապա տեսնել մեր զաւակաց գերութիւնն, մեր տանց աւերումը և այլն...“ Լսաբերը գեռ չէր վերադարձած, Դէլի-Պապայի երիտասարդներն բարձրացան իրենց պատնէներն և կազմ ու պատրաստ կսպասէին իրենց սարսափելի բոպէին: Քիւրդ ցեղապետը, որ մի օր առաջ մի քանի հարիւր հեծեալներով գալով Տօդի աւերակ գիւղը, բոլորովին հողի հետ հաւասարացնելի վերջ գեռ չէր յագեցած, ուզեց իր պարտութեան վրէժն առնուլ Դէլի-Պապա գիւղէն: Ակերպիշեալ թար-Խօջա գիւղէն յիշեալ Ղատը յիմնապետը իրազրգերով, իւր հետն առնելով Տօդի գիւղի Պայածեանց նահապետական և ամենահարուստ տան երկու զաւակներն կօլտո և Հայրապետ, իրը թէ ցոյց տան իրենց կողղպտած 500 ոչխարը, հարիւրէ աւելի տաւարները իրենց տան անթերի գոյքը և կայքը բայց հազիւ հասել էին Տօդի մօտ, Դէլի-Պապայէն ևս մօտ 30 տօդեցի հայեր գնացին հաշիւ տալու իրենց կմասների և աւերմունքների: Երբ սրանք ևս այս կողմից հասան իրենց գիւղի մօտ, ահա լաւցին հը ա ց ան ի ձ ա յ ն ե ր ք ր դ ե ր ը կը դիմադրեն զօրաց, զօրքերը լսոյս կուտան և էլի նեղջ հայերը կը մնան այդ վայրենիների ճանկը: Հայերը լալով ու աղաղակով կը փախչէն, քրդերը հրացանի գնդակները կը տեղացնեն, մի բոպէում չորս մեռեալ և մի քանի վիրաւոր թողելով դաշտի մէջ՝ հայերը գիւղ գիւղի տունը կուտան հետուած եղած կը գուար կը մասն այդ վայրենիների ճանկը: Եթէ Դէլի-Պապայի գագաթէն պահպան հրեշտակի նման չը համենին մի քանի գնդակներ, բոլորը կը կոտորւէին... Երբ մի քանի վիրաւոր գիւղին փուլեցին քրդերը սարսափահար յետ նահանջեցին:

Դեռ սրտներուս մորմաքը չէր հանդած, ահա Դէլի-Պապայի կիրճից և կարճի կողմից լսեց զօրաց իուղի

ձայնը, 80 հեծեալ՝ հազարապետով միասին, որոնց հետ մօտ 10-15 համբականներ թէւ հազարապետը քըրդերուն կը յորդորէ հայերու վրայ յարձակիլ բայց քըրդերը՝ այդ արիւնարբու համբականները աւելի բարձր, աւելի ազնիւ կը գտնեին, քան հազարապետ մը, ըսելով որ ո՞մենք անկարող ենք մի այդպիսի դաւ լարելու։ Աերջապէս հազարապետը իւր արիւնուշտ զօրքերով իջաւ Դէլի-Պապա գիւղը, ապա իւր մօտ կանչելով Դէլի-Պապա գիւղի ազնիւ հայ Համբար աղան, նաև խոստումներով, շքանշաններով կը յորդորէ ըսելով՝ ոգիտեմ, որ ձեր գիւղում կան երկու երեք հարիւր զինեալ հայ յեղափոխականներ, եթէ ստոյդ չէ, ինչպէս կըլլայ հապա, որ Բասենի բոլոր գիւղերը աւերակ և ամայի դարձան, իսկ ձեր գիւղը ոչ եթէ կը խոստանաս ճշմարիտն ասել, այս բովեիս քեզ թոշակ տալու հրաման կը բռերեմ։ Երբ նա անվեհեր կերպով կը պատասխանէ թէ որնաւ չկան այդպիսի յեղափոխականներ, անմիջապէս զօրքերին կը հրամայէ հրացանի գնդափով խիել։

Գիշեր էր կանանց և մանր երեխայոց ողբն ու աղաղակը գիւղը թնդացուց. լուր տարածւեց, որ յիշեալ Համբար աղան հրացանի գնդակներով կսպանեն. Հասան ծերունի կանայք սրտամորմօք և աղեկուուր լացով հազիւ աղատեցին։ Ահա հազարապետ մը, որ հրացանի գնդակներով կը հարցաքննէ խեղճ ժողովուրդը։

Այսօր գեր րոպէ մը գտայ ազատ նկարագրելու այս անցքերը, մանրամասնութիւնները ի բաց թողով։ Ո՞ գիտէ այլ ևս բազդը գուցէ չըյաջողէ մեզ մեր հայ եղբարց արտասովոր անցքերը, վիշտը ու տառապանքը տեսնել ու գրի անցնել։ Միայն սա չափ կարող եմ ասել, որ մեր նկարագրածները համեմատելով մնացածների հետ սա ինազարութիւն և երջանկութիւն են համարում։

ԿՈՏՈՐԱԾՈՒՅԻ

Ե Ր Զ Ն Կ Ա

I

Հատոնց թուրք խուժանին մէջ պատրաստութիւններ կը տեսնեէին հայերը ջարդելու համար. Վերջին օրերս սկսան իրենց գոյնը բոլորովին դուրս տալ և դէս ու դէն տարաձայնել՝ թէ կետավուրները պիտի կարտենք։ Հայ ժողովուրդը տեսնելով, որ տարաձայնութիւններն սպառնական երեսյթ մը կսկսին առնել, վճռեց, որ փոխառջնորդը քահանաներու և ժողովորդին երեւելիներուն հետ գիմն Զէքի փաշոյին և իրենց ցաւը յայտեն։ Մենք կը պատքամաւ անցները ու աղջունները սկսան իր շահատակութիւնը. կարծես թէ բաւական չէրն անգութ խուժանին խոցերը սկսներն ալ մէջտեղ ելան և այնքան անմեղներու, այնքան ազնիւ հոգիներու արիւնը թափեցին։ — Երբ անտէր հայ ժողովուրդը ահակե, ծակէծակ կը փախէէր, թուրք աւազակ խուժանը քրդերու հետ խանութիւնները կողովտել սկսաւ. ակնթարթի մը մէջ բալոր հայ խանութիւնները ամայացան, ասեղ մը անդամ չէրն ձգեր որ աչքերնիս կուէինք, և որովհետև այդ ահագին ապրանքը չէրն կարող կրել, աւելորդ մասը ծախսեցին ամենաշնչին գնով. 10-20 սոկի ապրանքը 20-30 դահեկանի կուտային։

Կը փնտուէ խմելու:

Դիմում դիմումի վրայ. վերջին անգամ, երբ թուրքերը պէտք եղածին պէտք պատրաստ էին, Հայաստանի ժանդակալու Զէքին հայերը ծուղակի մէջ լաւ ձգելու համար, զինուորներ կը հանէ երկուշաբթի օր և փողոցներուն բերանը կը շարէ, իբր թէ կատղած խուժանին առջելը առնելու համար։

Երկուշաբթի առաւօտ, ժողովուրդը ճարահատ, քիչ մ'ալ Զէքին խօսքին ապակնելով (զերջապէս կը կարծենք թէ քիչ մը արժանապատռութեան զգացում կունենայ), սկսաւ շուկան ելլել, թէ քիչ մը մը կասկածու: Զինուորները բռնած հայերուն վրայ էլ խուզարկէին և եթէ զէնք գտնէին, կը գրաւեին ըսելով ո՞մի վախնապ, թուրքերուն լուր կը զօկէր, որպէս զի երկուշաբթի օրերը՝ որ բազարի օր է, զինւած դան և երբ մունետիկը պոռայ, թէ ժամանակ էլ լքացած է, յարձակէն հայերուն վրայ և կոտորեն։

Թուրքերուն համար ուրախութեան և հարսանիքի օրեր էին այդ օրերը, անհամբեր պատրաստութիւններ կը տեսնէին անպաշտպան ժողովուրդ մը մորթելու համար. Բաւական ժամանակ ու և է յարձակման նըշան չէր երեար, այնպէս որ հայերը տնկասկած քաղաքին մէջ տարտղնեցան իրենց գործերով զրադելու. համար. այդ միջոցին յանկարծ իրարանցում մը դուռմ գոյում մը փրթաւ քաղաքին մէջ. 10000 զինեալ աւազակներ սկսան անխնայ կոտորել անզէն ժողովուրդը. փախող փախողի, լաց, միչ աղաղակ երկինք ու երկիր կը թնդացնէին. թշնամին անգութ էր կը զարնէ, ոչ երեխայի, ոչ կնոջ կը նայի. մէկ էլիք մը պիայն ունի գետինը հածկւած տեսնել հայի անշունչ դիակով։ Անոնք, որ կողմանի փողոցներէն կը փախէէին, պահապան զինուորները սկսներով ետ կը մղէին արիւնկան կուտանքներ կարող եղան՝ սկսներու վյայէ թուշել և զողոպրել անքիշական մահէն։ Քիչ յետոյ բարձրագոյն հրամանով պահապան զիկըն ալ սկսաւ իր շահատակութիւնը. կարծես թէ բաւական չէրն անգութ խուժանին խոցերը սկսներն ալ մէջտեղ ելան և այնքան անմեղներու, այնքան ազնիւ հոգիներու արիւնը թափեցին։ — Երբ անտէր հայ ժողովուրդը ահակե, ծակէծակ կը փախէէր, թուրք աւազակ խուժանը քրդերու հետ խանութիւնները կողովտել սկսաւ. ակնթարթի մը մէջ բալոր հայ խանութիւնները ամայացան, ասեղ մը անդամ չէրն ձգեր որ աչքերնիս կուէինք, և որովհետև այդ ահագին ապրանքը չէրն կարող կրել, աւելորդ մասը ծախսեցին ամենաշնչին գնով. 10-20 սոկի ապրանքը 20-30 դահեկանի կուտային։

Մեռածներուն և զիրաւորաւածներուն թիւր չափ չունի։

Դիակներուն մէկ մամը յանձնեցին Եփրատի որոտահու ալիքներուն, որոյ մայրական գիրնէ Հայաստանի բազմաթիւ անբախտ գաւակներուն. յաւիսներական պատանիքն եղած է: Քիւրդ մը երդում պատառ կըլլայ՝ թէ ինք իր աչքով տեսներ է 20 դիակներ Եփրատի. մէջ նետելնին: Խսկ անոնք, որ սկսներով սպանւած էին,

զինւորները բահ և փետատ առած, սայլերով տարին քաղաքէն հեռու մասնաւոր փոսերու մեջ թաղեցին, տրոնջալով, թէ ոկեալուրներուն սատակածներն ալ իրենց գլխներուն պելա եղան»:—Որպէս զի կառավարութիւնը իր բարբարասութիւնը ծածկէ, մէկ քանի վերաւորեալներ և քանի մը դիակներ ալ հայոց բերաւ յանձնեց՝ ցուցնելու համար՝ թէ ինքը պաշտպան է հայերուն: Վիրաւորեալները անթիւ են. իսկ կառավարութիւնը մեզի յանձնած է միայն 100 մեռած, անոնք ալ անձանաչելի փիճակի մէջ կարելի չէ այդ թշւառներուն վրայ նայել և չանիծել այս աշխարհը. մարդկային սրտերը չեն կարող դիմանալ: Բոլոր դիակներն ալ մինչև իրենց շապիկը ու վարտիքը կողոպատած և մօրէ մերկ ձգած են: Երեք օր վերջը, այդ նահատակները թաղւեցան:

ՏՐՈՊԻՉՈՒԻՑԻՑ

Կեսարիայէն 25 նոյեմբեր թիւ քաշւած հեռագրէ մը կը տեղեկանանք՝ թէ հոն ալ կոտորած տեղի ունեցած է, — մանրամասնութիւնք կը պակսին:

— Կարին 25-ին նոյեմբերի (ն. տ.): Երրորդ անգամ ըլլալով տաճիկներն վատարար յարձակում գործեցին. հայերէն 12 մեռեալ, 20-ի չափ ալ վիրաւոր:

Ամեն շաբաթ Օսմաննեան նաւելն Պոլսէն խումբի ուստի Հայաստանցիներ՝ հսկողութեան ներքեւ Տրապեզոն կը բերւեն, որք քանի մը օր բանտերն չարչարւելէ վերջ՝ ձեռքերնին մէկ օրւայ բաւելու չափ հաց առած, զինւորներէ շրջապատեալ կանցնեն կերթան: Բայց ուրի, որ կողմի անդունդը, դժւար է որոշել արդէն ով կրնայ գիտնալ, ամեն հայ մահւան դուռն հասած է:

Սիւրմէնէի հայոց վրայ յարձակող 1500-ի չափ պաշիպուրքներ և զինւորներ, ուրք իրենց անյաջողութենէն յուսահատած Բաբերգի և շրջակայ անզէն գիւղերու վրայ յարձակած էին, վերադարձան անհամար աւարներով ու գերիներով, միայն ճավուուրցի 400 տաճիկներն, 60 հայ աղջիկներու խումբ մը իրենց տները քաղցուցին: Հատ ու շատ հարսեր ու աղջիկներ ալ իրենց պատիւն պաշտպանելու համար ինքնասպան եղան, մանաւանդ Քասանթայի հայուհիք, իրենք զիրենք զրի մեծ հորերու մէջ նետելով՝ եղերական մահով աղատւեցան բոնաբարութիւններէ, այնպէս որ հետապնդողները, որք ուշացած էին՝ իրենք զիրենք դիակի կոյտերի վրայ գտան:

Նոյեմբերի 18-ին Սիւրմէնէի տաճիկներն անզէններու վրայ տարած յաղթութենէ քաշալերւած՝ կրկին Ալչափ-Յէրէի ծուռքը թաղի հայոց վրայ կը յարձակին սոտորաբար. Կապաննեն ի միջի այլոց Աւեակս Ցաւլշեան՝ որ օգտակար ու խնացի անձնաւորութիւնն մըն եր նոյն օրը ուրիշ խումբ մին ալ զապիճիկներու ընկերակյալնեամբ իլլ յարձակեն իրենոնոս դիւզի Մարդէ, Խումիք վրայ և անւանի բործիչ Յարութիւն Աւանանը կերպով վիրաւորելէ վերջ՝ կը յաջողին 10 սուն ալ այրել և թալանել: Նոյեմբեր 20-ին՝ երկու

օր վերջ՝ տաճիկներն սպանեցին Մարիամ անուն օգտակար կինը:

Հայերն բնաւ չեին կարծեր, որ կրկին և կրկին կառավարութենէն յարձակում կը կրեն, մինչ դեռ անդին սուլթանն ու իր արբանեակներ դիշեր ցերեկ կը մտածեն՝ թէ ինչպէս շուտով Հայերն բնաջինը ընեն: Այժմ կառավարութիւնը այլ միջոցի մը դիմած է իր զինւորներու և պաշիպողութ գործակալներու միջոցաւ բացարձակապէս կստիպէ հայ գիւղացիներն, որ կրօնափոխ ըլլան. ալ ձեզի կը թողունք երեակայել անզէն, յուսահատած ժողովրդին քաշածներն:

Գազան կառավարութիւնը այսքա՞ն թափւած արիւն: Ներէ չէ յագեցած դեռ: Ի՞նչ պէտք է ընել:

Զէ՛, իլէ՛զ սուլթան, այդ քեզ ընել չի յաջողիր: մենք մեր արևան հեղեղներով քո ու, աղտոտ հոգիդ մէկ օր անպատճառ պիտի խեղդնէք, և գիտնասութեան ամենավերջին րոպէին իսկ մեր պարած սրտերէն թռած արդարութեան ճիշը անբարոյական գահդ պիտի շանթահարէ:

Ցառաշ մէզ, ալ քեզ ալ, դուն ամեն տեսակ լըր բութիւններ քեզ զէնք շինելով չանա՞ մեր ձայնը խեղեղներէ: Մէնք, իրաւունքի և նշամարտութեան զաւակներս, վստահ մեր իրաւանց արդարութեան վրայ պիտի կրութինք. աչքերնիս վճռական մահւան յառած ենք. այս կերպ չենք մար. կամ կապրինք իրը աղատ մարդ կամ կը մեռնիք. կամ մինը կամ միւսը:

ՍԵԲԱՍՏԻՈՆ ԵՒ ՅԻՇԱԿԱՆԵՐ

Հոկտ. 31-ին, երեքշաբթի, տեղացի թուրք և գուրսէն եկած քիւրդ խուժանը յարձակեցան շուկայի վրայ և սկսան անզէն հայերը կոտորել և ամեն բան աւարի տալ: Զը մասց վաճառական մը որուն խանութը ըսթալնէրի. Վայ անոր, որ կը յանդգնէր դիմագրել: Այդպիսին ոչխարի պէս կը մորթէրին: Մտան մեծ շուկայի մէջ՝ փակւած խանութներու, մժերանոցներու դուները կոտորեցին և մէջի եղած բոլոր ապրանքը յափշտակեցին, միզի պատերը միայն թողլով: Նիւթական վասանիս հաշել անկարելի է: 40 սենեակ ունեցող պանդոկի մը մէջ, ուր հայ վաճառականք կը բնակէին, այժմ 7 հոգի միայն կայ, բոլորը սրէ անցուցին: Թըրքաց մօտ հայ թաղերը ողլ մացող երբէք չկայ: Հրապարակներու մէջ դիակներ կը դիշեին: Կոտորածը սոսկալի եր Մարթիններու և ատրճանակներու ձայնը օդը կը լեցնէր: Խեղճ ժողովուրդը սարսափահար ուր փախը չէր գիտեր, ամեն կողմ արիւնը գետի պէս կը հոսէր: աղաղակը, թափած արցունքը նշանակութիւն ըունէին: Հայրիկ՝ մայրիկ՝ պոռագուներուն աղաղակները մարդու ջիղերը կը սառաւմնենէն: Սատերը վախէն նւաղած ինկան: Գալանները թէ կիր ինչ այլուր շանթահարէն վերջ՝ սկսան տուներու վրայ յարձակիլ: հինգ հարիւրի մէջ թանելէն վերջ՝ սկսան տուներու վրայ յարձակիլ: հինգ հարիւրի չափ այլուր անդին կը մուռ 2170 է, որոց 200-ը կի-

է, և 500-ի չափ ալ վերաւոր: Մէկ տունէ 2-3 հոգի մեռած շատ կայ:

Այժմ հայ գերեզմանատունը 200 կանանց և 600 արանց արիւնաթաթախ դիակներ բերւած են: Ողջ մը նացողները ներքնատները ծակելով՝ միմեանց հետ յարաբերութիւն կրնան ընել գուրս ենել ոչ ոք կը համարձակի:

Կուրի առաջի պահուն վիճակիս առաջնորդ Թահմիզձեան Պետրոս սրբազնանը կուսակալին կը դիմէ և օդնութիւն կը խնդրէ: Կուսակալը կը պատասխանէ, թէ ոքանի մը սրիկաներ կը կուրին, ադոր համար ի՞նչ զօրք հանեմ: Առաջնորդը կը պնդէ, որ հայ ժողովուրդը կը կոտորւի, բազմաթիւ դիակներ ինկած են փողոցներու մէջ, թէ այդ քանի մը սրիկաներու մէջ տեղի ունեցած կուր մը չէ, թէ զօրքի միջամտութիւնը անհրաժեշտ է և այլն և այլն: Կուսակալը կը տնտեսյ պարզապէս ժամանակը երկարելու համար: Առաջնորդը կը սրիպէ՝ որ անյապաղ զօրք հանէ: Անտեն կուսակալը հեռագիր մը կը ցուցնէ և կը սէ՝ „Եսպէս հրաման եկած է մազի: 24 ժամ՝ պիտի կոտորեն, թալանեն և անկէ վերջը միայն կառավարութիւնը զօրք կը հանէ խաղաղութիւնը վերականգնելու համար“: Քանի մը ժամ վերջը, արդարեւ, զօրք կը հանէ: ասոնք փողոցներուն բերանը կեցած, փախչել ուզող հայերը կարգելէն ու թուրք խուժանին կոտորել կուտային: Կոտորածին զօրքն ալ կը մասնակցէր և փախչողներին կը զարնէին, ըսելով՝ ոտահա պիր պարու եկեմետինիզ: Զօրքը նոյն իսկ կը քաջալերէր ու կը գրգուէր խուժանը և փախչողը ցուցնելով՝ նկեավուր իսէ վուրուն“ (հայ է նէ զարկէր) կը պոռար. աղջիկներ, հարսեր կը բռնաբարէին ու կսպանէին: Մինչեւ այժմ տուներու մէջ փակւածները տախտակներու ու չոր գետնին վրայ կը պառկին: ցուրտը արդէն սկսած է, եթէ անմիջական օգնութիւն չըլլայ, ցուրտն ալ մեծ կոտորած պիտի ընէ: Աղէ զատ խեղճ ժողովուրդը նորէն ամեն օր փախի ու դողի մէջ է: Նորանոր գէպիքներ անպակաս են. գիտերուն մէջն զօրք համար սարսափելի կոտորած կայ: Ղոշասար ըսւած գիւղին վրայ քովի տաճիկ գիւղերէն մէկ երկու անգամ յարձակեցան, բայց չի յաջողեցան. վերջը կառավարութիւնը զօրք հանեց յիշեալ գիւղի վրայ, չորս հարիւր հոգի սպանեցին, եզւ ոչխար, եշ ձի ամեն բան քշեցին տարին եկեղեցին, քանդեցին, արծաթեղէն, ինչ որ կար յափշտակեցին. միայն պղտիկ մէկ մասը լեռները փախչելով՝ ազատեցան:

Դըտամած գիւղէն հարիւր հոգի սպանեցին և ամեն ինչ առին տարին, ոչ սերմ մնաց և ոչ ձմեռւան պաշար:

Նոյեմբ. 28-ին Բռաբերդ գիւղէն Դաւթեան տէլի Սարգիսը բռնեցին, շատ չարչարելէ վերջ՝ զօնասար տանենք պիտի ըսելով, տարին գիւղին եղելը մորթեցին. ապա եկան տղան ալ ուզեցին, բայց տղան իախան էր: Մինչեւ սյօր անյայտ եղած է. ուրիշ մէկ երկու անձինք ալ սպանեցին, բռլոր ոչխարնին և ունեցածնին յափշտակեցին:

Սեբաստիոյ Քօդինի գիւղէն աւագ երկը քահանան և համբ Թաթէկոսը և ուժիշ եօմը անձինք ալ մորթեցին Սարսափահար եղած գիւղացիք զգեցին լեռը ելան իրենք զիրենք աղատելու համար Յակալին յայտնի չէ, թէ ով մեռաւ, ով ողջ մնայ, մննիամանութիւնը կը

պակսին:

Մի քանի գիւղեր՝ որոնց մէջ տաճիկը քիչ է, կառավարութենէն զօրք զոկած է իր տաճիկները պաշտպանելու համար: Այդ անօմի գայլերը և անոնց ձիերը հայերը կը կերակրեն: Այս մի քանի գիւղերն ալ այսպիսով կը թշւառացնեն:

* *

ԼԻ Ի Ի Ի Ի Ի Ն

Երկրիս վիճակը գուժելու համար՝ գրիչս ինկածներու արեան մէջ թաթախած կը գրեմ, հաղորդելու համառափակ, թէ ի՞նչ պատահեցաւ մեզի:

1895 հոկտ. 31-ին, աշագին բազմութիւն մը թուրքերու, քիւրերու և չէրքէզներու՝ մօտ և չեռագոյն վայրերէ, այնէ Ազիզիյէ, Ալպիւթան, Կանկալ Տարէնտէ անուն գիւղերէն՝ գունդ կազմած արշաւեցին աւանիս վրայ և սկսան մէկ ծայրէն մինչև միւսը անխնայ կոտորել Տուները, մտան և յափշտակելով կաթնէիր մանուկներ իրենց մօր գրկերէն, օդին մէջ կը նետէին և յետոյ իրենց նուրերը բարձր բռնելով՝ վրան կը ձգէին և զանոնք շամբուրի պէս կը դարձնէին: Մեր գեղանի կյասեր և հարսներ լկեցին, խայտառակեցին, շատերն ալ հետերնին առին տարին կտրիմ, անզէն երիտասարդաց գլուխները դրանց սեմերու վրայ զնելով՝ կացինի մի հարւածով կը թոցնէին: իսկ ծերունիները այրւած, հրդեհւած տանց աւերակին տակ թաղւեցան, մոխիր դառնալով հրդեհի խարոյկին հետ... Արեան հեղեղներ յօրդեցան ամեն հայ փողոցներու մէջ: Այժմ հազարաւոր թշւառներ աստ անդ խելայել կը թափառին: Ձկայ անոնց վերքին սպեղանի. անտէր անտէրունչ լքւած են: Աչ ոք կը համարձակի գուրս եղնել մեռելոց գիւղները կը փատին ու կը նեխսեն հրապարակաց մէջ: Սոյն ահուելի կոտորածէն ազատ մնացող ամենափարը մէկ մասը մերկ, նօթի և անտուն է. զի հայը տուն չունի այլէս, ամենն ալ կրակը լափեց ու աւերակ ըրաւ: Գոյք, կարասիք, ուտեստ, ինչ որ կը գտնէր, յափշտակեցին տարին, այնպէս, որ չորս օր անընդհատ աւար կրելով՝ հազիւ հատցուցին: Ողջ մնացողներն ալ ցուրտէն և քաղցէն մեռնելու վրայ են: Եթէ մուրալու ըլլան, պատառ մը հայ տող ալ չկայ, հայը չունի որ տայ: ալ ով պիտի գթայ:

Մերկ, բորիկ, գլխիբաց, ցրտին գիմաց գողացողներ անհամար են: Արակ, կրակ, հաց, հաց աղազակողներու ձայնը երկէնք կը բարձրանայ: 10,000-է աւելի ին յարձակող վայրենիք, ողք կը պոռան միշտ՝ ոմեր թագաւորը հրամայեց մեզի սրէ անցնել բոլոր կեավուրները և յափշտակնել անոնց ունեցածը:

Արդարեւ, անոնց ամենքը զանազան իրարմէ հեռի վայրերէ, միննյուն օրը, միննյուն ժամուն միասին հաւաքումը, իրենց կանխիաւ պատրաստութիւնը և կառափարութեան նամնաւոր հրահաննից կապացուցանէ, կառավարութեան՝ որ խուլ եղաւ և աչք գոցնց բոլոր գաղանային արագներուն:

Նահատակնեաւ զոհերու թիւը 1800-ը կանցնի, հետերնին տարիւած կոյսերու և հարսներու թիւը գելու:

անօրոց է. շատ մայ անյայտ և կորսւած անձինք ունինք: Այս է ահա մեր վիճակը:

* *

Տարենակ, Աշոտի, Գարասար, Մանձըլըդ չորս գիւղերն ալ գրեթե զուտ հայրանակ են: Կիւրինի վրայ յարձակող քիւրդ, չերքեզ և թուրք վայրենեաց ահագին բանակը այս գիւղերուն վրայ ևս յարձակած է: Աշոտի և Գարասար իսպատ աւերակ գարձած և բնակչաց մեծագյն մասը սրէ անցուցած են: Տարենակ ամբողջ կողոպտած և բնակիչներուն մի մասն ալ ջարդած են: Մանձըլըդ գիւղին բոլոր հարստութիւնը՝ ոչխար, հօտ, տան կարասի, մանաւանդ համանուն հռչակաւոր և հարուստ վանքը բոլորովին թալնած են: Այստեղ ալ կիսով չափ մարդու կորուստ կայ: Սով և նեղութիւն տիրապետած է ամենուրեք:

* *

Կ Ե Պ Ա Ր Ի Ա

1895թ. նոյեմ. 18-ին, շաբաթ օր, թերեկատն ժամ 8 ու քառորդէն սկսեալ տեղացի թուրք խուժանը յարձակեցաւ նախ շուկային և հայ վաճառականներու բնակած պանդոկներու վրայ: Կողոպուտ, աւարառութիւն, սուր և արին կը տիրէր քաղաքին մէջ: Շատ քիչը կարողացան թողուլ իրենց կրպակը ու փախչել: Նոյնպէս քաղաքին շուրջը եղող հայ տուներու մէջ ոչ ոք մնաց կենդանի: Աթամպուգու պանդոկին մէջ 43 հոգի հայ աղքատ կօշակարներուն և ոչ մին պլծաւ թրբաց անողորմ սրէն. եղան այսպիսի տուներ, որու բոլոր անդամները՝ ծերէն մինչև օրրանի կաթնկեր մանուկը՝ սրէ անցուցին մասնաւոր նպատակաւ: Հռոչակաւոր անողուն շարքը՝ անուն հարուստ հայաբնակ շուկան աւարի տալէ յետոյ՝ քարիւղով ամբողջը վառեցին: Կիւրիմական վնասնիս անհամար է, դոհերու թիւը 2000 կը. հասնի... աւաղ մեջի: Սոյն աւարառութիւնը և կոտորածը գիշերւան ժամը մինչեւ հինգ տևեց: Երեակայեցէք այլևս թէ ինչ եղանք..

* *

Եարալթուն, Էսանլը, Գարակէոլ Սերաստիոյ և Կեսարիոյ միջև գանւած բոլոր հայ գիւղերը աւարի մատնելէ յետոյ, ահագին բազմութիւն մը քիւրդ, թուրք և չերքեզ ցեղերու յարձակեցան վերոյիշեալ երեք գիւղերու վրայ, կողոպտեցին տուներնիս տեղերնիս և ինչ որ ունեինք անգիտորէն առին տարին:

Գարակէոլ գիւղին վրայ յարձակող Մէօհր-Ալի չերքէջ ձիաւորները այնքան նեղութիւն տւին մեզի, զոր անկարելի է մարդկորէն նկարագրել: Ի Մտակ պահածէք՝ ըստով՝ կանանց վրայ յարձակել, զանոնք անպատճել սանձարձակ իրենց բոլոր տմարդութիւնը, գաղանութիւնը ի գործ դնել ոչ չսւած, չըտեսնաւծ բաները ըրին:

Կաբալթունի մէջ հիւրասէր և հարուստ երեկին հայ մը՝ կերթայ գրացի թուրք գիւղէ մը անկողին և զգեստ կը մուրայ այսօր: Մնացեալը կրնաք երեակայել:

Եքրէք և Թօմարչա գիւղերու մէջ մարդու կորուստ չունինք, իսկ դոյք, կարասիք, ոչխար, արտ և ամեն ինչ որ ունեինք աւին, տարին: Աւարառուները չերքեզ էին:

Նոյնական թուրքական թաշնակութեան կենտրոնական սնդուկի մէջ ստացւեցան:

Օ. ք-ից Փ. Խ. Ք.-ի միջոցաւ 200 բուրլի, Դ. Խ. 200 բուրլ:

Արշակաւան քաղաքի կենտրոնական սնդուկին մէջ ստացւած են:

Ծաքէ Խ. 285 գահեկան 21 փարա, Կաղին 200 ֆրանկ, Հով 20 դհ., Կարապետ Մելքոն 40 դհ., Մանուկ 10 դհ., Արագածոտն Խ. 80 դհ., Վարդանեան Խ. 20 դհ., Արշալոյս Խ. 35 դհ., Փամիկուշտ 10 դհ., Ցոյս 10 դհ., Յաղթութիւն 10 դհ., Լոյս 20 դհ., Մահմակալ 60 դհ., Բաֆֆի Խ. 20 դհ., Ծմակ Խ. 120 դհ., Ենիշէրի Խ. 70 դհ., Ապուալիլ Խ. 30 դհ., Կայծակ Կ. Ա. 10 դհ., Կացին Մ. Բ. 10 դհ., Վասպուրականի Առիւծ Խ. 50 դհ., Արծիւ Խ. 200 դհ., Լախտ Խ. 15 դհ., Զեմիւռ 12 դհ. 20 փարա, Մամիկոնեան Խ. 30 դհ., Արշոյր 20 դհ., Օք. Մառի 10 դհ.:

Զեյթունի ի նպաստ.—Զեյթուն Խ. 4 օսմ. ոսկի, Շաւարչի ձեռքով հայր և որդի 240 դհ., Պղտիկ 10 դհ., Գրիչ 30 դհ., Ցոյս 40 դհ., Կրակ 20 դհ., Սեր 10 դհ., Վրէժ 10 դհ., Արգոս 35 օսմ. ոսկի, Աղաւնի 50 դհ., Ելիզա 20 դհ., Ովսաննա 10 դհ., Թագուհի 10 դհ., Գոհար 10 դհ., Էօժէնի 5 դհ., Վիկտորիա 40 դհ., Արձագանք 60 դհ., Մարի 10 դհ., Ֆիկին Մանիկ 10 դհ., Կայծ 10 դհ.:

Արշապ քաղաքի Կեդ սնդուկի մէջ ստացւած են:

Յառաջադիմասէր 50 դհ., Ս. 2. 20 դհ., Արծիւ 40 դհ., Աղաբեկ 5 դհ., Զեյթուն 10 դհ., Նւարդ 5 դհ., Ուշինի 5 դհ., Եփրատ 40 դհ., Վրէժմանդիր 20 դհ., Կացին 5 օսմ. ոսկի, Արամեան Խ. 25 դհ., Սուրիկ 56 դհ.: Օձէն—Նիւթիչ 270 դհ., Ածուխ 40 դհ., Գնդակ ներ 104 դհ., Գէորգ 100 դհ., Օձի միջոցաւ Բլուր քաղաքէն—Հատու 100 դհ., Քանի մը երեխտարդները 57 դհ. 20 փարա, Պ. Տ. 20 դհ.,

Բոլգ. Սթրալճայի հայ պանդուխտներից 100 ֆրանկ. Կանսիի երկրագործական վարժարանի ֆրանսիացի ուսանողներից 62 ֆրանկ:

Ը. Գ. Գ. 8. 10 ֆր., Օք. Խ. 10 ֆր., Օք. Ե. 10 ֆր.: Ամերիկ. Մատիսոն ք. - Յ. 5 դոլար, Բոստոն ք. Վարաժնունիի ձեռքով 5 դոլար.

Մի ուսանողական երեկոյթից 550 ֆրանկ:

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպած ենք մեր նոր հասցէն գարձանել, ԱՐՄԵՆ-ԳԱՍՊԱՐ որի վրայ հրաւիրում ենք աւանձին ուշադրութիւն:

Խմբագրութեան հետ թղթակցողներից ինդրուում է բացառապէս գիւղեր այդ նոր հասցէով:

Դաշնակցութեան անձանօթներից խնդրում է թղթակցութեան և նվիատութեան համար պիմել:

Արմեն-Գասպար, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 19, Russel Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան: